

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱՍ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ԷԹՆՈՍ» ԷԹՆՈՍՏՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА
НАУЧНЫЙ ЦЕНТР ЭТНО-КУЛЬТУРНЫХ ИССЛЕДОВАНИЙ "ЭТНОС"

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS OF REPUBLIC OF ARMENIA
"ETHNOS" SCIENTIFIC CENTRE OF ETHNO-CULTURAL RESEARCHES

Ա. Ս. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ
ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՇՐՋԱՆԱԿԱՎՈՐ ԳԱՍՏԱԿՈՎ
ԳԱՇՈՒՅՆՆԵՐՆ ՈՒ ՍՐԵՐԸ

А. С. ПИЛИПОСЯН
ДРЕВНЕВОСТОЧНЫЕ КИНЖАЛЫ И МЕЧИ
С РАМОЧНОЙ РУКОЯТЬЮ

A. S. PILIPOSYAN
ANCIENT EASTERN DAGGERS AND SWORDS
WITH FLANGED HILT

111
6889

Հայաստանի հնագիտական հուշարձանները
Археологические памятники Армении
The Archaeological Monuments of Armenia

17

Բրոնզեդարյան և երկաթեդարյան հուշարձաններ
Памятники эпохи бронзы и железа
Bronze and Iron Age Monuments

Պրակ Выпуск Issue

IV



« Զ Ա Ն Գ Ա Կ - 9 7 »

Երևան — Ереван — Yerevan
1999

904(5)

Աշխատանքը հրատարակվում է
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտոր
Է. Վ. Խանգադյան

ԴՏՀ 902/904
ԳՄԴ 63.4
Փ 218

Փիլիպոսյան Ա. Ս.


Փ 218 Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը:–
Եր.: Չանգակ–97, 1999.– 150 էջ:
(Հայաստանի հնագիտական հուշարձաններ)

Փ 0504000000 99
003(01)–99

ԳՄԴ 63.4

ISBN 99930–2–051–6

© Փիլիպոսյան Ա., 1999



**Հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում
Մարիամ և Քրիստինե Արսլանյաններին
(Թուսոն, Արիզոնա, ԱՄՆ)
գրքի հրատարակության գործում ցուցաբերած համակողմանի
օգնության և ֆինանսական օժանդակության համար:**

*** * ***

**Автор выражает глубокую благодарность
Мариам и Кристине Арсланянам
(Тусон, Аризона, США)
за всестороннюю помощь и финансовую
поддержку в издании книги.**

*** * ***

**Author is profoundly obliged to
Mariam and Christine Arslamian
(Tucson, Arizona, USA)
for their thorough help and material support
to publish this book.**

Published by the
University of Chicago Press
Chicago, Illinois, U.S.A.
and London, England

Printed in Great Britain
by the University Press,
Cambridge

Author's address: Department of
Physics, University of
Chicago, Chicago, Illinois, U.S.A.
The British Library, London, U.K.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռևս 19-րդ դարի վերջերին, Մերձավոր Արևելքի և Միջերկրականի ավազանի մ.թ.ա. 3-1-ին հազարամյակների միջցեղային և միջերկրամասային մշակութային կապերին և փոխառնչություններին նվիրված հարցերն ուսումնասիրելիս, մասնագետների ուշադրությանն արժանացան նաև տարածաշրջանից հայտնաբերված սպառազինության օրինակները (Perrot A., Chipiez Ch. 1894: Morgan J. 1896: Montelius O. 1900: Petrie F. 1912): Այս ուղղությամբ կատարվող հետազոտությունները սիստեմատիկ բնույթ ստացան 20-րդ դարի 20-ական թվականներից (Bonnet H. 1926: Morgan J. 1927: Dussaud R. 1930: Hancock F. 1934: Maxwell-Hislop K. 1946: Maxwell-Hislop K. 1949: Stronach D. 1957: Sandars N. 1961: Πορσεβοβα Μ. 1977: Medvedskaya I. 1982: Philip G. 1989: Lüth F. 1989: Philip G. 1995 և այլն):

Թվարկված աշխատանքներում ձեռքի տակ առկա ողջ հնագիտական նյութը պայմանականորեն բաժանված է մի քանի խմբերի, որոնք իրենց հերթին տարանջատվում են ենթախմբերի, տարբերակների և այլն: Խմբերից մեկը ներառում է դաշույնները, դանակներն ու սրերը: Ելնելով դաստակի կառուցվածքից, նրանք հիմնականում բաժանվում են խողովակավոր, շրջանակավոր (ազուցվող), ցանցկեն (հյուսածո) և զանգածեղ տարատեսակների: Ըստ որում նյութի սակավությունը, որոշ տարածաշրջանների, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհի գտածոներին քիչ ծանոթ լինելն, ինչպես նաև եզրակացությունների հապճեպությունը, երբեմն արդյունքում տվել են ոչ ամբողջական, իսկ որոշ դեպքերում նաև՝ ոչ իրական պատկեր: Մասնավորապես դա վերաբերում է միջինբրոնզեդարյան սուսերներին անվերապահորեն Միջերկրականի ավազանի արդյունք համարելուն (Déchelette J. 1910, էջ 425-434), Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված շրջանակավոր դաստակով դաշույններին ու սրերին իրանական ծագում վերագրելուն (Несен А. 1935: Крупинов Е. 1951: Πορσεβοβα Μ. 1977, էջ 33-58), ցանցկեն կամ հյուսածո դաստակով զենքը դասակարգման մեջ չներգրավելուն և այլն:

Պատկերը մոտավորապես նույնն է նաև սպառազինության հաջորդ խմբում, որն իր մեջ միավորում է կացինները, տապարներն ու սակրերը: Պայմանականորեն (նաև կամայականորեն) սրանք ևս բաժանվել են այսպես կոչված կախակոթառ, խարսխածև, ելուստավոր, կիսալուսնաձև, անհավասարակող, արձանագարդ, երկբերան, հարթ և այլ տեսակների ու, կախված այս կամ այն տեսակի ուսումնասիրության ընթացքում ձեռքի տակ առկա փաստացի նյութի քանակի, բազմազանության և աշխարհագրական սփռվածության (թեև մեծ մասը պատահական գտածոներ են)՝ ստացել առավել կամ պակաս հիմնավորում ունեցող մեկնաբանություն: Դրա հետևանքով, առանց լուրջ պատճառի, «խարսխածև» կոչված սակրերի արտադրության նախնական կենտրոնը համարվել է Հարավային Միջագետքը (Maxwell-Hislop K. 1949), թեև այստեղ նրանք հայտնի են եզակի և ոչ դասական օրինակներով: Արձանագարդ կոթառներով սակրերն անվերապահորեն դարձել են լուրիստանցի վարպետների մենաշնորհը (Vanden Berghe L. 1982-1983), իսկ «կիսալուսնաձև» կոչվածները, չզիտես ինչու, տարածում են ստացել Փոքր Ասիայից (Stronach D. 1957): Արդարության դեմ չմեղանչելու համար պետք է նշել, որ զինատեսակի այս խմբի ուսումնասիրության գործում կան նաև լուրջ

ծերքերումներ, որոնք արդիական են մակ ախոր և հիմնականում ռուսական հնագիտական դարոցի գիտական բարձր մակարդակի արդյունքն են (Черных Е. 1966: Котович В.Г., Котович В.М. 1973: Кореневский С. 1974: Кореневский С. 1976: Кореневский С. 1981, էջ 20-41: Батчаев В., Кореневский С. 1982 և այլն):

Որպես պատմա-մշակութային կապեր ու փոխառնչություններ մատնանշող արտեֆակտներ, Հին Արևելքի և Միջերկրականի ավազանի մ.թ.ա. 3-1-ին հազարամյակների սպառազինության մեջ, առանձնացվել են մակ նիզակներն ու տեղերը (Bonnet H. 1926: Mallowan M. 1937a, էջ 99, աղ. 13, նկ. 10,11: Egami N. 1959, էջ 8, աղ. 81, նկ. 4: Catling H. 1964, էջ 119-124: Dever W. 1975, էջ 23-28: Vanden Berghe L. 1964, էջ 24: Philip G. 1989, էջ 89-96: Philip G. 1995, էջ 133-136, աղ. 7: Мартиросян А. 1964, էջ 29-31: Есаян С. 1966, էջ 13-17: Техов Б. 1977, էջ 24-26, 35, նկ. 34: Խնկիկյան Օ. 1977, էջ 24-26, աղ. 2: Козенкова В. 1982, էջ 17-19, աղ. 12,13), գուրգերը (Bonnet H. 1926, էջ 10-11, նկ. 5: Girshman R. 1938-1939, աղ. 3, նկ. 4, 5: Schmidt F. 1931, էջ 93: Schaeffer C. 1948, էջ 93, նկ. 138: Уварова П. 1900, էջ 26, աղ. 16: Крупнов Е. 1951, էջ 44, նկ. 9: Техов Б. 1977, էջ 26-32: Есаян С. 1966, էջ 13-26, աղ. 1-4: Козенкова В. 1982, էջ 25-26, աղ. 28), նետաալարները (Déchelette J. 1910, նկ. 35, 71: Girshman R. 1938-1939, էջ 17-18: Dyson R. 1964, էջ 40: Negahban E. 1964, նկ. 49: Hakemi A. 1973, աղ. 22: Medvedskaya I. 1982, էջ 83-94, աղ. 14, 15: Погребова М. 1977, էջ 72-74, աղ. 12: Козенкова В. 1982, էջ 13-17, աղ. 10, 11), լանջապանակները (Schaeffer C. 1948, էջ 464, աղ. 250, նկ. 40: Marimatos S. 1959, նկ. 223: Kehnscherper G. 1973, էջ 151: Крупнов Е. 1957, էջ 159, նկ. 3: Блаватская Т. 1966, էջ 237, նկ. 86: Жоржикашвили Л., Гогодзе Э. 1974, էջ 53, աղ. 46: Брейд У. Трамп Д. 1990, լուսանկար 3: Оганесян В. 1990, էջ 9), գոտիները (Таşуёrek О. 1975: Muscarella О. 1981a, Esayan S. 1985, էջ 98-198: Kellner H.- J. 1991: Merhav R. 1991, էջ 141-161: Козенкова В. 1982, էջ 51-52, աղ. 29, 30: Урушадзе Н. 1988, էջ 121-147), ձիաաանձերը (Godard A. 1931, աղ. 40: Girshman R. 1938-1939, աղ. 62, 68, 75: Schaeffer C. 1948, աղ. 299: Goff C. 1970: Куфтин Б. 1941, էջ 61-70: Мартиросян А. 1964, էջ 88: Хачатрян Т. էջ 161: Погребова М. 1977, էջ 79-82, աղ. 14: Есаян С., Геворкян Э. 1982, էջ 118-120: Եսայան Ս. 1994, էջ 39-44, աղ. 8, 9-11, 25-28) և այլն:

Պատմա-մշակութային կապեր մատնանշող նշված բոլոր զինատեսակների քննարկումն անկասկած պահանջում է խորն ու համակողմանի ուսումնասիրությունների իրականացում: Այս աշխատանքում մենք նպատակահարման գտանք անդրադառնալ միայն շրջանակավոր (ազուցվող) դաստակ ունեցող դաշույններին, դանակներին ու սրերին, քանի որ վերջիններս առավել մեծ տարածում ունեն Հին Արևելքում ու Միջերկրականի ավազանում և հավանական եզրահանգումների ավելի լայն հնարավորություն են ընձեռում:

ՇՐՋԱՆԱԿԱՎՈՐ ԴԱՍՏԱԿՈՎ ԴԱՇՈՒՅՆՆԵՐԻ ՈՒ ՍՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Հին Արևելքից հայտնաբերված գինատեսակների հարուստ հավաքածուից դեռևս դարասկզբին առանձնացվեց բրոնզե դաշույնների ու սրերի մի ընտրանի, որին պայմանականորեն տրվեց «առաջավորասիական տիպ» անունը (Йессен А. 1935, էջ 162-163):

Վերջին մի քանի տասնամյակների պեղումները ցույց տվեցին, որ այսպես կոչված «առաջավորասիական տիպի» դաշույններն ու սրերը միայն Առաջավոր Ասիայով չեն սահմանափակվում և լայն աշխարհագրական ընդգրկում ունեն: Հանդիպում են նրանք Էգեյան աշխարհի (Schaeffer С. 1948, աղ. 158/14: Sanders N. 1961, աղ. 18/5, աղ. 19/2: Anati E. 1968, էջ 70, նկ. 35), Հյուսիսային Աֆրիկայի (Bonnet H. 1926, էջ 65, նկ. 24: Saleh M., Sourouzian H. 1987, նկ. 48/1, նկ. 55), Սիրիա-պաղեստինյան աշխարհի (Schaeffer С. 1948, էջ 48, աղ. 44/4, 45/Ս, 49/3, 130/2, 141/Բ, 312/31: Petrie F. 1912, աղ. 32, նկ. 30: Dussaund R. 1929, էջ 239: Ποгребова М. 1962, էջ 14, աղ. 4: Ποгребова М. 1977, էջ 39-40), Հայկական լեռնաշխարհի (Спицын А. 1909, էջ 11, նկ. 31: Йессен А. 1935, էջ 162-163: Крупнов Е. 1951, էջ 66-68, նկ. 25: Мартиросян А. 1964, էջ 50, նկ. 20/16: Есаян С. 1966, էջ 70-73, աղ. 12, նկ. 1-7: Хачатрян Т. 1963, էջ 52, նկ. 6: Хачатрян Т. 1975, էջ 114-115, նկ. 69: Խնկիկյան Օ. 1977, էջ 33, աղ. 5, նկ. 2-8: Փիլիպոսյան Ա. 1983, էջ 9-10), Սնդրկովկասի և Կովկասի (Крупнов Е. 1951, էջ 66-68, նկ. 25: Пицхелаури К. 1979, աղ. 6, 7, 9: Пицхелаури К. 1982, էջ 19, աղ. 21: Кашкай М., Селимханов И. 1973, աղ. 18, նկ. 19,21, աղ. 25: Асланов Г., Вайдов Р., Ионе Г. 1959, աղ. 13, նկ. 7: Техов Б. 1977, էջ 7, նկ. 2, էջ 33, նկ. 3, էջ 54, նկ. 1: Техов Б. 1980: Чартолани Ш. 1989, աղ. 13, նկ. 1), Իրանական սարահարթի (Contenau G., Ghirshman R. 1935, էջ 76: Dussaud R. 1938, աղ. 54-55: Hutchinson R. 1934, նկ. 1: Meek T. 1939, էջ 10, նկ. 1: Schaeffer С. 1948, աղ. 217, 265: Moorey P. 1974, նկ. 23: Dyson R. 1964, էջ 38, աղ. 1/4: Negahban E. 1964, նկ. 47, 48: Samadi H. 1959, նկ. 18, 19: Vanden Berghe L. 1964, աղ. 29, նկ. 227: Vanden Berghe L. 1983, էջ 64, նկ. 27: Vanden Berghe L. 1959, էջ 274-275, աղ. 117), Միջագետքի (Andrae W. 1909, էջ 53: Macalister R. 1912, աղ. 96: Mackay E. 1925, աղ. 22, նկ. 5-8, 10), Արաբական թերակղզու (Lombard P. 1981, էջ 87-93, աղ. 1), Բահրեյնի (Bibby G. 1974, էջ 277), Դեկանի սարահարթի (Lal B. 1951, նկ. 8) և նույնիսկ Հեռավոր Արևելքի (Погребова М., Членова И. 1970, էջ 292, նկ. 1: Членова И. 1971, էջ 33, նկ. 33/2, 3) հնագիտական հուշարձաններում:

Ընդհանուր հատկանիշը, որով միավորվում է գեների այս մեծ ու տարածական առումով լայն ընդգրկում ունեցող խումբը, դաստակին արված երիզներ են, որոնք փոքր-ինչ ներս ծավելով, պահում ու ամրացնում են դաստակի երկու հանդիպակաց լայն կողմերից ազուցված ներդիրները և, ըստ էության, շրջանակի տպավորություն ստեղծում: Այս է պատճառը, որ «առաջավորասիական տիպ» ընդհանուր տերմինի փոխարեն ներկայումս հիմնականում կիրառվում է «շրջանակավոր դաստակով դաշույններ ու սրեր» անվանումը:

Այս դաշույններն ու սրերը հիմնականում պատրաստված են բրոնզից (հազվադեպ հանդիպում են երկմետաղյա և երկաթե օրինակներ) և կառուցվածքային առումով բաժանվում են երկու հիմնական մասերի՝ ա) դաստակի, բ) շեղքի (աղ. 1): Դաստակն իր հերթին կարող է բաղկացած լինել կառուցվածքային երեք հատվածներից՝ ա) գլխիկից, բ) բռնակից, գ) խաչարդից: Գլխիկը դաստակի վերնամասի լայնացումն է: Դաստակը բռնելիս այն միշտ դուրս է մնում զինակրի ավից և նպաստում է դաշույնի շեղքը պատյանից (մաև հակառակորդի մարմնից) հեշտ հետ հանելուն: Երջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի մոտ գլխիկն ունի վեց դրսևորում՝ ա) հովհարածև, բ) շրջանածև, գ) մահիկածև, դ) կորնթարդ, ե) շեղանկյունածև, զ) թամբածև (աղ. 1, նկ. 2): Բռնակը գլխիկի և խաչարդի միջև ընկած տարածությունն է, դաստակի այն հատվածը, ուր մտնում է զինակրի ավիը: Այն ունի երկու հիմնական դրսևորում՝ ա) ուղիղ-հարթ, բ) ուղիղ-մատնեքավոր (աղ.1, նկ. 3)* : Խաչարդը (օտարալեզու գրականության մեջ հաճախ կոչվում է «ռիկաստ») դաստակի ստորին հատվածն է և, ընկած լինելով բռնակի ու շեղքի միջնամասում, պահպանում է ավիը շեղքի սայրերից: Քննարկվող դաշույնների ու սրերի մոտ այն հանդիպում է ութ ձևերով՝ ա) ուղղանկյունածև, բ) զանգվածեղ, գ) ներձկված, դ) սեղանածև, ե) եղանածև, զ) շրիշակավոր (ձողածև), է) եղջյուրավոր, ը) պայտածև (աղ. 1, նկ. 4): Եղջյուր ունի երեք դրսևորում՝ ա) հավասարաչափ նեղացող (տերևածև), բ) գեղարդածև, գ) կեռ (աղ.1, նկ. 5): Երջանակավոր դաստակով սրերի ու դաշույնների համար անխտիր է բռնակի և շեղքի առկայությունը: Գլխիկը և խաչարդը վերոհիշյալ զենքի տարբեր օրինակներում կարող են արտահայտված լինել կամ բացակայել: Քննարկվող զենքի բավական կատարյալ ձևերը թույլ են տալիս ենթադրել, որ այն, ըստ ամենայնի, ավելի վաղ ժամանակներում տարածված, համեմատաբար պարզ զինատեսակից կարող է ձևավորված լինել: Այս առումով, մեզ հավանական է թվում, այդ վաղ օրինակը համարել վաղբրոնզեդարյան պոչուկավոր դաշույնը, որի պոչուկի աստիճանական լայնացման ու երիզավորման շնորհիվ կարող էր ձևավորվել խնդրո առարկա զինատեսակը: Այս ենթադրությանը, թերևս, կարելի է հանգել, վաղբրոնզեդարյան պոչուկավոր դաշույնների մոտ, պոչուկների աստիճանական ձևափոխումներն ուսումնասիրելիս (աղ. 2, նկ. 1-37):

Երջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի նշված հատվածների (գլխիկ, բռնակ, խաչարդ, շեղք) տարբեր համադրումներով, այդ թվում մաև նրանց մի մասի (գլխիկ, խաչարդ) առկայությամբ կամ բացակայությամբ, կազմվում են այս զինատեսակի ենթախմբերը: Չեքի տակ եղած հնագիտական նյութը մեզ հնարավորություն է ընձեռել շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի խմբում, ըստ կառուցվածքային առանձնահատկությունների զանազանել երեք ենթախմբեր: Պայմանականորեն դրանք կարելի է ներկայացնել քննարկվող զինատեսակը կազմող վերոհիշյալ հատվածների հետևյալ համադրությամբ.

1-ին ենթախումբ. - բռնակ + շեղք

2-րդ ենթախումբ. - բռնակ + խաչարդ + շեղք

* Անհարկի կրկնություններից և ավելորդ բառակապակցություններից խուսափելու նպատակով բռնակի տեսակը ներկայացնող «ուղիղ-հարթ» և «ուղիղ-մատնեքավոր» տերմինների վտխարեն տեքստում կիրառվել են մաև վերջիններից համառոտագրված «հարթ» և «մատնեքավոր» բնորոշումները:

3-րդ ենթախումբ. - գլխիկ + բռնակ + խաչարդ + շեղք:

Տեսականորեն առաջին և երկրորդ ենթախմբերի միջև կարելի է ենթադրել ևս մեկ ենթախմբի գոյությունը: Այն պետք է ունենա գլխիկ + բռնակ + շեղք սխեմա և դատելով ոչ բոլոր հատվածների առկայության փաստից (բացակայում է խաչարդը) պետք է որ վերաբերի քննարկվող զինատեսակի առավել վաղ թվագրվող (թերևս մ.թ.ա. 3-2-րդ հազ. սահմանագիծ) օրինակներին: Մեր այս ենթադրությունն առայժմ թեական է, քանի որ ձեռքի տակ եղած հնագիտական նյութը դեռևս հնարավորություն չի տալիս փաստագրել այն: Շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի երեք ենթախմբերում առանձնացված նմուշները՝ գլխիկի, բռնակի, խաչարդի և շեղքի վերը թվարկված դրսևորումների բազմազան համադրությունների շնորհիվ հանդես են բերում ներենթախմբային ուշագրավ տարբերակներ: Ստորև քննության են առնվում ենթախմբերի մեջ առանձնացվող տարբերակների բոլոր առկա դրսևորումները:

ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱԽՈՒՄԲ

Այս ենթախումբը կազմող դաշույնների կառուցվածքային ձևերը պայմանավորված են դաստակի հատվածներից մեկի (բռնակ) և շեղքի առկայությամբ: Ըստ որում նշված հատվածների թվարկումն արդեն իսկ հուշում է ձևավորվող շրջանակավոր դաստակով զենքի նախնական օրինակների մասին, որոնց վրա դեռևս առանձնացված չեն գլխիկն ու խաչարդը, իսկ բռնակը փաստորեն նույնանում է դաստակի հետ: Այս տարբերակին վերաբերող դաշույնները սակավաթիվ են (սրեր ընդհանրապես չկան) և ըստ կառուցվածքային առանձնահատկությունների բաժանվում են երկու տարբերակների:

Առաջին տարբերակ (աղ. 2, նկ. 38-42) - Այս տարբերակին պատկանող դաշույններն ունեն երիզներով օժտված ուղիղ-հարթ դաստակ-բռնակ և հավասարաչափ նեղացող կողերով ու սուր ծայրով շեղք: Դաշույնների երկարությունը 21-44 սմ է, իսկ դաստակ-բռնակը կազմում է զենքի երկարության մոտ 1/3-ը: Շեղքերը հատույթում թույլ ձվաձիթ են, հիմնականում զուրկ կենտրոնական ողից կամ խորադիր ակոսներից: Հայտնի են նրանք Միրիա-Պաղեստինյան աշխարհի (Ռեզարիթ, Բիրլոս) հնագիտական հուշարձաններից և թվագրվում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծով (մ.թ.ա. 21-19-րդ դդ.) (Schaeffer C. 1948, էջ 13, 26, 59-60, 414, աղ. 45/Ս, 49/4, 61/ Q: Dunand M. 1926-1932, էջ 153-161: Bonnet H. 1926, էջ 65-69, նկ. 25/բ): Այս տարբերակին վերաբերող այլ դաշույններ Հին Արևելքի մյուս շրջաններից մեզ հայտնի չեն:

Երկրորդ տարբերակ (աղ. 2, նկ. 43) - Այս տարբերակն առայժմ ներկայացված է մեկ օրինակով: Այն պատահական գտածո է Միրիա-Պաղեստինյան աշխարհից և ըստ Հ. Բոննեի, վերաբերում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբին (Bonnet H. 1926, էջ 65-66, նկ. 25/բ): Այդ թվագրումը հաստատում են նաև զենքի արխաիկ ձևերը (մասնավորապես գլխիկի և խաչարդի բացակայությունը): Դաշույնն ունի երիզներով օժտված մատնեքավոր դաստակ-բռնակ և հավասարաչափ նեղացող կողերով ու սուր ծայրով շեղք: Դաստակը կազմում է զենքի երկարության մոտ 1/3-ը, իսկ շեղքը զուրկ է կենտրոնական ողից և խորադիր ակոսներից: Հին Արևելքի մյուս

շրջաններում, որքան մեզ հայտնի է, այս տարբերակին վերաբերող այլ դաշույններ առայժմ վկայված չեն:

Այսպիսով, եթե իմի բերենք շրջանակավոր դաշույնների ու սրերի առաջին ենթախմբին վերաբերող շարադրանքը, կարելի է պնդել, որ դրանք Հին Արևելքում հանդես են գալիս մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծին և բացառապես վկայված են Սիրիա-Պաղեստինյան աշխարհում:

ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԽՈՒՄԸ

Այս ենթախումբը կազմող դաշույնների ու սրերի կառուցվածքային ձևերը պայմանավորված են դաստակի երկու հատվածների (բռնակ, խաչարդ) և շեղքի առկայությամբ: Նրանցից յուրաքանչյուրն այս ենթախմբում ունի հետևյալ դրսևորումները.

1. Բռնակ - ա) ուղիղ-հարթ, բ) ուղիղ-մատնեքավոր
2. Խաչարդ - ա) ուղղանկյունաձև, բ) եղանաձև, գ) շրիշակավոր (ձողաձև)

3. Շեղք - ա) հավասարաչափ նեղացող (տերևաձև), բ) կետ

Նշված դրսևորումները պայմանավորում են շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի երկրորդ ենթախմբի հինգ տարբերակները:

Առաջին տարբերակ (աղ. 3, նկ. 1-15) - Այս տարբերակը կազմում են ուղիղ-հարթ բռնակով, եղանաձև խաչարդով, հավասարաչափ նեղացող իրան և սուր կամ կլորավուն ծայր ունեցող շեղքով դաշույններն ու վաղակները (կարճ սրեր): Սիրիա-Պաղեստինյան աշխարհում այս տարբերակին վերաբերող զենքը հանդիպում է Չազար-բազարի (Schaeffer C. 1948, աղ. 81/1), Գազայի (Schaeffer C. 1948, աղ. 126/22), Ուզարիթի (Ռաս-Շամրա, քիվ 13 հյուքսոսյան դամբարան) (Sandars N. 1961, էջ 18, նկ. 18/4), Թել-Աչանայի (Ալալիս՝ 7-րդ հորիզոն) (Sandars N. 1961, էջ 18/3) և Գեզերի (Schaeffer C. 1948, աղ. 158, նկ. 14) հնագիտական հուշարձաններից (աղ. 3, նկ. 1-3, 6, 8): Ըստ Կ. Շեֆերի Չազար-բազարի դաշույնը թվագրվում է մ.թ.ա. 20-18-րդ դարերով (աղ. 20), իսկ Գազայի և Ուզարիթի դաշույնները, որ հայտնաբերվել են հյուքսոսյան դամբարաններից՝ մ.թ.ա. 18-16-րդ դարերով: Մյուս օրինակները Ն. Սանդարսը վերագրում է մ.թ.ա. 16-15-րդ դարերին: Մոտավորապես այդպիսի թվագրություն ունի նաև Գեզերից հայտնաբերված օրինակը (աղ. 22, նկ. 2): Չենքի երկարությունը 33-60 սմ է, իսկ դաստակը կազմում է ողջ երկարության 1/3-1/7-ը: Շեղքերը հատույթում հիմնականում ձվաձև են (Թել-Աչանայինը միայն՝ շեղանկյունաձև է) և զուրկ կենտրոնական ողից ու խորադիր ակոսներից:

Հաջորդ տարածաշրջանն, ուր հանդիպում է այս տարբերակին վերաբերող զենք, Էգեյան աշխարհն է (աղ. 3, նկ. 4, 5, 7, 9, 10): Այն հայտնաբերվել է Միքենե (Պելոպոնես՝ դամբարան 6), (Sandars N. 1961, աղ. 18/5, 19/2: Anati E 1968, էջ 70, նկ. 35), Ազիա-Թրիադա (Կրետե), (Sandars N. 1961, աղ. 18/1), Զոմեյրոս (Կիկլադյան կղզիներ), (Sandars N. 1961, աղ. 19/6) բնակավայրերի հնագիտական համալիրներից և, ըստ Ն. Սանդարսի, վերաբերում են մ.թ.ա. 16-15-րդ դարերին: Դաշույնների ու սրերի երկարությունը 38-58 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/4-1/5-ը: Շեղքերը հատույթում ձվաձև են կամ շեղանկյունաձև և հիմնականում օժտված են կենտրոնական ողով: Ամենայն հավանականությամբ Էգեյան դաշույնների ու

սրերի քննարկվող օրինակները նախատիպեր են հանդիսացել կենտրոնական Եվրոպայի և մասնավորապես Հունգարիայի (Դյոզե, Շագհեդ, Վայյա, Ֆինկե) մ.թ.ա. 1-ին հազարամյակի բրոնզե դաշույնների ու սրերի համար (աղ. 3, նկ. 12-15):

Նույն տարբերակին վերաբերող մեկ սուր հայտնաբերվել է Փոքր Ասիայում (Իզմիր) (Sandars N. 1961, նկ. 19/7) և թվագրվում է մ.թ.ա. 16-15-րդ դարերով (աղ. 3, նկ. 11): Սրի երկարությունը 67,5 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/7-ը: Շեղբը հատույթում ձվածիր է՝ օժտված կենտրոնական ողերով: Հին Արևելքի մյուս շրջաններում այս տարբերակին վերաբերող զինատեսակ չի հանդիպում:

Երկրորդ տարբերակ (աղ. 4, նկ. 1-16) - Այս տարբերակի դաշույններին (սրեր չկան) բնորոշ են ուղիղ-հարթ բռնակը, շրիշակավոր (ձողածև) խաչարդը և հավասարաչափ նեղացող կողերով և սուր կամ եռանկյունաձև վերջավորությամբ շեղբը: Նման դաշույնները հանդիպում են բացառապես Հայկական լեռնաշխարհում: Հայտնաբերվել են նրանք Գավառի (Նոր Բայազետ), Լճաշենի, Ներքին Գետաշենի (աղ. 52), Նորատուսի, Բջնիի, Դիլիջանի, Վանաձորի, Իջևանի, Գոլովինոյի, Ալավերդու, Առաջաձորի (Արցախ), ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան շրջանների (ներկայիս Ադրբեջանի արևմտյան հատված)՝ Շամխոր, Չովդար, Ելիզավետպոլ (Գանձակ), Կարա-բուլաղ (դամբարան 88) բնակավայրերի հնագիտական հուշարձաններից (Ивановский А. 1911, աղ. 7, նկ. 5: Լալայան Ե. 1931, էջ 156-158, նկ. 110: Մնացականյան Հ. 1959, էջ 11, նկ. 3: Կարապետյան Լ., Շահինյան Ա. 1961, էջ 72, նկ. 4: Есаян С. 1966, էջ 74, աղ. 12, նկ. 6: Եսայան Ա., Հովհաննիսյան Հ. 1969, էջ 47, աղ. 20, նկ. 1,2: Խանգաղյան Է. 1979, էջ 99-101, աղ. 23, նկ. 2, 5, 7, 9, 11, աղ. 24, նկ. 2, 4, 7, 11): Թվարկած դաշույնների զգալի մասը պատահական գտածոներ են: Հնագիտական փակ համալիրներից հայտնաբերվածները (Լճաշեն, Դիլիջան, Կարա-բուլաղ, Ներքին Գետաշեն, Նորատուս) ուսումնասիրողներին հնարավորություն են տվել դաշույնների այս տարբերակը թվագրել մ.թ.ա. 14-12-րդ դարերով (Жачатрян Т. 1975, էջ 16: Խանգաղյան Է. 1979, էջ 99: Փիլիպոսյան Ա. 1991, էջ 30-32: Хнкикян О. 1993, էջ 107-114, աղ. II): Այս թվագրումն անուղղակի կերպով հաստատում են նաև նշված տարբերակի որոշ դաշույնների շեղբերին պահպանված սեպածև (եռանկյունաձև) նախշազաբղերը: Մեր կարծիքով այդ երևույթը կապված է Առաջավոր Ասիայի մի շարք շրջաններում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից բավական տարածում ունեցող դաշույնների ու սրերի վերնամասն անվանակիր - նվիրատվական սեպագիր տեքստերով զարդարելու ավանդույթի հետ: Ըստ ամենայնի, տուրք տալով առաջավորասիական զինագործության այս նորույթին (թեև, հաճախ նույնիսկ, չհասկանալով սեպագրի բուն իմաստը), Հայկական լեռնաշխարհի զինագործ վարպետները ևս իրենց արտադրանքը փորձել են զարդարել նմանատիպ փորագրություններով (այդ երևույթը նկատվում է նաև խեցեգործության մեջ): Այս տարբերակի զենքի Հայկական լեռնաշխարհում տարածված լինելն ու նրա տեղական արտադրության փաստը հաստատում է նաև Կապանի մոտակայքից հայտնաբերված նմանատիպ դաշույնի քարե կաղապարը (Караханян Г., Азизбекян О. 1981, էջ 75-77) (աղ. 69): Դաշույնների երկարությունը 26-35 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-ը: Շեղբերը հատույթում հիմնականում շեղանկյուն են, միշտ օժտված կենտրոնական ողերով: Առաջավոր Ասիայի

(նաև Հին Արևելքի) մյուս շրջաններում այս տարբերակին վերաբերող դաշույններ չեն հանդիպում:

Երրորդ տառոտեղակ (աղ. 5, նկ. 1-14) - Այն կազմում են հարթ բռնակով, ուղղանկյունաձև խաչարդով և հավասարաչափ նեղացող շեղքով դաշույններն ու սրերը: Սրանց վաղագույն օրինակների պատկերները թերևս հանդիպում են Եգիպտոսի 5-րդ և 6-րդ հարստությունների ժամանակաշրջանով (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջ) թվագրվող արձանների վրա (աղ. 5, նկ. 1-2): Ութ թեև նրանք միայն դաստակի մասով են երևում և ընդհանուր կառուցվածքի առումով հավաստի չեն կարող համարվել, այնուամենայնիվ, մենք նպատակահարմար գտանք վերջիններս ընդգրկել մեր դասակարգման մեջ, հաշվի առնելով դաստակների շրջանակավոր կառուցվածքն ընդգծող որոշ մանրամասների առկայությունը (Saleh M., Sourouzian H. 1987, նկ. 48/1, նկ. 55):

Այս տարբերակին վերաբերող դաշույնների բրոնզե օրինակները հայտնի են նաև Իրանական սարահարթից և թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերով (BMQ 1929, աղ. B, նկ. 1, 2; Moorey P. 1971, նկ. 51; Πορρεβοβα Μ. 1977, էջ 55, աղ. 7, նկ. 5; Medvedskaya I. 1982, աղ. 10, նկ. 2): Դաշույնների երկարությունը 32-34 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-ը: Շեղքերը հատույթում թույլ ձվաձիգ են՝ զուրկ կենտրոնական ողից և խորադիր ակոսներից (աղ. 5, նկ. 3-5): Այս տարբերակի դաշույնները Իրանական սարահարթում լայն տարածում չստացան (հայտնի է միայն երեք օրինակ): Ժամանակագրական որոշ ընդհատումից հետո (շուրջ 300 տարի) նույն տարբերակի երկմետաղյա նմուշները տարածվում են Հայկական լեռնաշխարհում (աղ. 5, նկ. 6-13): Ըստ որում, ուշագրավ է այն հանգամանքը, որ նրանք շրջանակավոր կառուցվածքը ստացել են երկաթակուռ բռնակի և խաչարդի վրա բրոնզե երիզների ամրացման ճանապարհով: Միայն հատուկեմտ դաշույններ գուտ երկաթակուռ կառուցվածք ունեն: Հայաստանյան օրինակները Վանտոսայի թագավորության զինագործական արհեստանոցի արտադրանք են: Նրանք հանդիպում են Հայկական լեռնաշխարհի կենտրոնական (Երևան, Էջմիածին, Կարմիր բլուր, Վան) և հյուսիսային (Մուսիերի) շրջանների, ինչպես նաև Հարավային Անդրկովկասի (Մամբավրո) հնագիտական համաժամանակյա հուշարձաններից և հստակ թվագրվում մ.թ.ա. 8-7-րդ դարերով (Плоторовский Б. 1959, նկ. 6; Πορρεβοβα Μ. 1984, էջ 49-58, աղ. 1, նկ. 17, 18, 20, 21; Wartke R.-B. 1991, էջ 325, նկ. 1; Есаян С., Биягов Л., Амаякян С., Канецян А. 1991, էջ 8-9, աղ. 10, նկ. 1, 2): Հայաստանյան դաշույնների ու սրերի երկարությունը 32-72 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/4-1/6-ը: Հիմնական մասի շեղքերը չեն պահպանվել: Պահպանվածները հատույթում ձվաձիգ են, օժտված կենտրոնական ողերով:

Չորրորդ տարբերակ (աղ. 5, նկ. 15-21) - Այս տարբերակի զենքը հիմնականում կրկնելով նախորդ տարբերակի ձևերը, տարբերվում է վերջինից միայն բռնակի մատնեքավոր կառուցվածքով: Սրանք ևս երկմետաղյա (երկաթե բռնակն ու խաչարդը օժտված են բրոնզե կամ արծաթե երիզներով) կամ երկաթակուռ օրինակներ են, դարձյալ պատկանում են Վանտոսայի թագավորության զինագործական արհեստանոցին և թվագրվում մ.թ.ա. 9-7-րդ դարերով: Սրերից մեկը հայտնաբերվել է Կարմիր բլուրի պեղումներից, իսկ երկուսը պատահական գտածոներ են Արևմտյան Հայաստանից ու պահվում են Բեռլինի և Փարիզի թանգարաններում (Плоторовский Б. 1959, էջ 163, նկ. 25; Wartke R.-B. 1991, էջ 322-331, նկ. 5, 6): Նմանատիպ չորս խիստ վատ

պահպանված սրեր (շեղբերը չկան) հանդիպում են Հարավայրին Անդրկովկասում (Սցխեթ, Սամքավրո) (Каландадзе А. 1980, էջ 109, նկ. 759, 762; Πορρεβοва М. 1984, էջ 49-58, ադ. 1, նկ. 13): Չենքի երկարությունն, ըստ հայաստանյան օրինակների, հասնում է մինչև 70 սմ-ի, իսկ դաստակը կազմում է նրա 1/6-ը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջիններս սերում են Վանտոսայի թագավորությանը վերաբերող հուշարձաններից, հնագիտական գրականության մեջ վերջին երկու տարբերակները միասին երբեմն անվանում են նաև «ուրարտական տիպ»:

Հինգերորդ տարբերակ (ադ. 4, նկ. 17-22) - Այս տարբերակին բնորոշ են հարթ բռնակը, ուղղանկյունաձև նեղ խաչարդը և կեռ շեղբը: Չենքը պատրաստված է երկաթից: Նման չորս դաշույններ (կարող են նաև դանակներ կոչվել) հայտնի են Վանի (Թոփրախ-կալե), Կարմիր բլուրի, Մասունիկի (դամբարան 17) և Նորատուսի (դամբարան 18) պեղումներից և հստակ թվագրվում են մ.թ.ա. 8-7-րդ դարերով (Пшотровский Б. 1944, էջ 83-85, նկ. 47): Նույն տարբերակին պատկանող երկաթե դաշույն և կարճ սուր (վաղակ) հանդիպում են նաև Անդրկովկասում (Վրաստանի Ռ-կինիս Կալո հնավայրի թիվ 3 և թիվ 10 դամբարաններ) և դարձյալ թվագրվում են մ.թ.ա. 8-7-րդ դարերով (Кобандадзе А. 1978, էջ 71-73, ադ. 11, նկ. 20, ադ. 21, նկ. 115): Չենքի երկարությունը տատանվում է 19-49 սմ-ի միջև, իսկ դաստակը կազմում է նրա 1/2 - 1/4-ը: Առաջավոր Ասիայի մյուս շրջաններում այս տարբերակին պատկանող օրինակներ, ըստ մեր տվյալների, չկան:

Եթե ամփոփելու լինենք շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի երկրորդ ենթախմբին վերաբերող շարադրանքը, կարելի է հիմնավորել, որ այս ենթախմբին վերաբերող առաջին օրինակները հանդես են գալիս մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծին Սիրիա-Պաղեստինյան աշխարհում և Եգիպտոսում: Վերջինում նրանք լայն տարածում չեն ստանում, իսկ Սիրիա-Պաղեստինյան աշխարհում շարունակվում են կիրառվել մինչև մ.թ.ա. 14 - 13-րդ դարերը: Հայկական լեռնաշխարհում այս ենթախմբի զենքը լայն տարածում է ստանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից և գոյատևում մինչև մ.թ.ա. 13-րդ դարի վերջը: Ժամանակագրական որոշ ընդհատումից հետո (մոտ 300-400 տարի), ամենայն հավանականությամբ, Վանտոսայի թագավորության զինագործական արհեստանոցների շնորհիվ՝ Հայկական լեռնաշխարհում սկսում են գործածվել նույն տարբերակի երկմետաղյա կամ երկաթակառ օրինակներ: Այս ենթախմբի դաշույնատեսակներն այդպես էլ ընդունելություն չեն գտնում Փոքր Ասիայում, Հյուսիսային Կովկասում և Իրանական սարահարթում:

ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱԽՈՒՄԲ

Այս ենթախումբը կազմող դաշույնների ու սրերի կառուցվածքային առանձնահատկությունները պայմանավորված են դաստակի երեք հատվածների (գլխիկ, բռնակ, խաչարդ) և շեղբի առկայությամբ: Նրանցից յուրաքանչյուրն այս ենթախմբում ունի հետևյալ դրսևորումները.

1. Գլխիկ - ա) հովհարածև, բ) շրջանածև, գ) մահիկածև, դ) կորնթարդ, ե) շեղանկյունածև, զ) թամբածև
2. Բռնակ - ա) ուղիղ-հարթ, բ) ուղիղ-մատնեքավոր

3. Խաչարդ - ա) ուղղանկյունաձև, բ) գանգվածեղ-քառակուսաձև, գ) ներճկված, դ) սեղանաձև, ե) եղանաձև, զ) շրիշակավոր (ձողաձև), է) եղջյուրավոր, ը) պայտաձև

4. Շեղք - ա) հավասարաչափ նեղացող (տերևաձև), բ) գեղարդաձև, գ) կեռ:

Դաստակի և շեղքի թվարկված դրսևորումների տարբեր համադրություններով էլ պայմանավորված են այս ենթախմբի տարբերակները:

Առաջին տարբերակ (աղ. 6, նկ. 1-29) - Այս տարբերակը կազմում են հովհարաձև գլխիկով, հարթ, վերին ու ստորին ծայրերում քիչ լայնացող բռնակով, թույլ արտահայտված նեղ սեղանաձև խաչարդով և հավասարաչափ նեղացող (տերևաձև) շեղքով դաշույնները (սրերը հազվադեպ են): Նրանց ամենավաղ օրինակները հանդես են գալիս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին Սիրիա-Պաղեստինյան աշխարհում (ՌՒգարիթ) և շարունակում գոյատևել մինչև մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերը (ՌՒգարիթ, Մեզիդո, Գազա, Նուզի, Չազար-բուզար, Թել-Ֆարա) (Schaeffer C. 1948, աղ. 44/4, 45/Մ, 49/3, 130/2, 141/Ա: Petrie F. 1912, աղ. 32, նկ. 30: Starr R. 1939, աղ. 125: Maxwell-Hislop K. 1970, էջ 165-166, աղ. 32-ա: Пиррецова М. 1962, էջ 14, աղ. 4/6, 4/7, 4/15: Benzi M. 1992, էջ 164, նկ. 7: Maxwell-Hislop K. 1946, էջ 34): Բոլոր դաշույններն էլ բրոնզից են: Այս տարբերակին պատկանող դաշույնների շարքին է փորձել դասել նաև Մարիից հայտնաբերված և Համմուրաբիի ժամանակաշրջանով թվագրվող որմնանկարում պատկերված գեներ Կ. Մաքսուել-Հիսլոպը, հիմք ունենալով միայն մի դետալ՝ սեղանաձև խաչարդի առկայությունը, որն, անկասկած, ոչ բավարար պայման է նման եզրահանգման համար:

Սիրիա-Պաղեստինյան դաշույնների երկարությունը տատանվում է 32-37 սմ-ի միջև, իսկ դաստակը կազմում է գեների ողջ երկարության 1/3-ը: Շեղքերը հիմնականում հատույթում թույլ ձվածիր են՝ զուրկ կենտրոնական ողից և/կամ խորադիր ակոսներից:

Եզիպտոսում հանդիպում են այս տարբերակին պատկանող ընդամենը երկու դաշույն: Դրանցից մեկը պատահական գտածո է, ըստ Հ.Բոննեի վերաբերում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ քառորդին և կապված է հյուսիսից կատարված ներխուժման փաստի հետ (Bonnet H. 1926, էջ 65, նկ. 24/б): Մյուս օրինակը դարձյալ պատահական գտածո է և թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով: Անշուշտ Հ.Բոննեի թվագրումները մոտավոր են ու պայմանական, քանի որ քննարկվող նյութին ուղեկցող հնագիտական համալիրները բացակայում են: Կարելի է հաստատապես ասել, որ այս տարբերակի դաշույնները (ընդհանրապես շրջանակավոր դաստակով գեներ) բնորոշ չեն Եզիպտոսին և տարածում չեն գտնում այնտեղ: Հ.Բոննեի մոտ եզիպտական դաշույնների չափսերը նշված չեն: Ըստ գծանկարի դաստակը կազմում է գեների ողջ երկարության 1/3-ը: Շեղքերը հարթ են, զուրկ կենտրոնական ողից և խորադիր ակոսներից:

Հաջորդ տարածաշրջանը, որտեղ հանդիպում է այս տարբերակին վերաբերող գեներ, Հայկական լեռնաշխարհն է ու նրան հարող տարածքները (աղ. 7, նկ. 11-17, 29-34, աղ. 23, աղ. 28, աղ. 33): Դրանցից վեցը Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններից են (Ֆրանգանոց, Ջուղա, Սևան, Կանաչուտ, Շիրակավան), իսկ մեկը՝ Հարավային Անդրկովկասից (Կախեթիա՝ Չենո-Բողբե դամբանաբլուր 5) շրջաններից են (Есаян С. 1966, էջ 87, նկ. 4/2: Алиев В. 1968, էջ 81: Пицхелаური К. 1979, էջ 79-82, աղ. 7): Հայաստանից և Անդրկովկասից հայտնաբերված քննարկվող տարբերակի

դաշույնների թվագրության գործում առանձնակի դեր ունեն Սևանի թիվ 18 դամբարանից (աղ. 31)⁷ և Կախեթիայի Ջենո-Բողբե հնավայրի թիվ 5 դամբարանաբլուրից (աղ. 29) պեղված օրինակները: Վերջիններին ուղեկցող հնագիտական նյութերը թույլ են տալիս համալիրները թվագրել մ.թ.ա. 15-14-րդ դարերով: Ըստ Ս.Եսայանի Ֆրանգանոցի բրոնզե դաշույնը վերաբերում է մ.թ.ա. 15-րդ դարին, իսկ Ջուղայի երկու դաշույնները Վ. Ալիևը վերագրում է մ.թ.ա. 12-11-րդ դարերին: Թվագրում, որի հետ չի կարելի համաձայնել, նկատի ունենալով դաշույնների ուշբրոնզեդարյան ընդգծված հատկանիշներն ու 12-11-րդ դարերի հնագիտական համալիրներում նմանօրինակ զենքի իսպառ բացակայությունը: Շիրակավանի թիվ 35 դամբարանից հայտնաբերված երկաթե դաշույնը (պեղող հնագետներ Ռ. Թորոսյան, Լ. Պետրոսյան, Օ. Խնկիկյան), որ ըստ ուղեկցող հնագիտական նյութի վերաբերում է 8-7-րդ դարերին, վկայում է Հայկական լեռնաշխարհում այս տարբերակի զենքի երկար օգտագործման մասին: Նշված դաշույնների երկարությունը 28-41,5 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի ողջ երկարության 1/3-1/4-ը: Շեղբերը հատույթում ձվաձիգ են, օժտված կենտրոնական ողերով և խորադիր ակոսներով:

Այս տարբերակին վերաբերող կովկասյան օրինակները հայտնի են Կվասատալի, Գարի և Թլի հնագիտական հուշարձաններից և, ըստ մասնագետների, թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդով (Курфтин Б. 1949, էջ 223, աղ. 9, նկ. 3, աղ. 29, նկ. 7: Техов Б. 1977, էջ 105-106, նկ. 89/5: Пицхелаури К. 1965, էջ 132, աղ. 19, նկ. 1: Крупнов Е. 1951, էջ 68: Крупнов Е. 1958, էջ 106: Пицхелаури К. 1959, էջ 104: Крупнов Е. 1960, էջ 749-751): Թլիից հայտնաբերված դաշույնն այս տարբերակի մեջ կարելի է ներգրավել որոշ վերապահումով, նկատի ունենալով դաստակի արտաքին կողմի անսովոր գծագրությունը: Նրանց երկարությունը 27-55 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի երկարության 1/3-1/5-ը: Շեղբերը հատույթում ձվաձիգ են, երբեմն օժտված կենտրոնական ողով:

Նշված տարբերակին վերաբերող բրոնզե չորս դաշույններ հայտնի են Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան շրջաններից (Լուրիստան, Թալիշ): Դրանցից երկուսը պատահական գտածոներ են և Ռ. Դյուսոյի ու Կ. Շեֆերի կարծիքով վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին (Dussaud R. 1938, աղ. 55: Schaeffer C. 1948, աղ. 217/1): Հաջորդ երկուսը հայտնաբերվել են Լ. Վանդեն Բերգեի կողմից Լուրիստանի Կութալ-ի Գուլգուլ դամբարանադաշտի թիվ 3 դամբարանի պեղման ժամանակ և, ըստ ուղեկցող հնագիտական նյութի, թվագրում են մ.թ.ա. 13-12-րդ դարերով (Vanden Berghe L. 1973, էջ 25, նկ. 3, 6): Դաշույնների երկարությունը 32-36 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի երկարության 1/3-ը: Շեղբերը հատույթում ձգված վեցանկյան տեսք ունեն և օժտված են կենտրոնական ողով:

Վերջին տարածաշրջանն, ուր հանդիպում է այս տարբերակին վերաբերող զենք, Արաբական թերակղզու հարավ-արևելյան հատվածն է: Այստեղ հայտնի են նմանատիպ բրոնզե երեք դաշույններ Դուբայից և Ալ-

* Պեղող հնագետ Հ. Մնացականյանը այս դամբարանի նյութը ՀՊՊԹ-ի բաժնենմատյանում սխալմամբ գրանցել է թիվ 18, 19 և 20 դամբարանների տակ: Իրականում նշված երեք դամբարաններում, ըստ բաժնենմատյանի, առանձնացված խեցանոթների բեկորներում հանդիպում են նույն անոթին պատկանող կտորներ, ինչը վկայում է նրանց նույն դամբարանին պատկանելու հանգամանքը:

Այնից, որոնք Պ. Լոմբարդի կարծիքով վերաբերում են մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների սահմանագծին (Lombard P. 1981, աղ. 1, նկ. B, աղ. 2, նկ. A, B): Դաշույնների երկարությունը 25-31 սմ է, դաստակը կազմում է նրա 1/3-ը: Շեղբերը հատույթում թույլ ձվածիր են, գուրկ կենտրոնական ողից:

Այսպիսով, շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի երրորդ ենթախմբի առաջին տարբերակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս լայն ընդգրկում ունի և հանդիպում է Սիրիա-Պաղեստինյան աշխարհի, Հյուսիս-արևելյան Աֆրիկայի, Հայկական լեռնաշխարհի, Կովկասի, Իրանական սարահարթի և Արաբական թերակղզու հնագիտական հուշարձաններում: Ըստ որում, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբի վաղագույն օրինակները հանդիպում են միայն Սիրիա-Պաղեստինյան աշխարհում: Առաջավոր Ասիայի (նաև Հին Արևելքի) մյուս շրջաններում այն տարածում է ստանում հիմնականում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից:


Երկրորդ տարբերակ (աղ. 7, նկ. 1-34, աղ. 8, նկ. 1-33, աղ. 17, նկ. 1): Այս տարբերակը կազմում են հովհարածև գլխիկով, հարթ՝ վերին ու ստորին ծայրերում աստիճանաբար լայնացող բռնակով, ընդգծված ուղղանկյունաձև խաչարդով և հավասարաչափ նեղացող շեղբով դաշույններն ու սրերը: Առաջին տարբերակից ունեցած հիմնական տարբերությունը խաչարդի ընդգծված ուղղանկյուն կառուցվածքն է և նրա վրա երբեմն առկա կիսակլոր թևիկները: Այս տարբերակին պատկանող զենքի վաղագույն օրինակները հանդիպում են Սիրիա-Պաղեստինյան աշխարհում և թվագրում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներով: Այստեղ նրանք լայն տարածում են ստանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի միջնամասում (աղ. 21, նկ. 4), իսկ կիրառությունից դուրս են գալիս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին (Schaeffer C. 1948, աղ. 44/5, 44/6, 95/6: Godard A. 1962, էջ 14: Πορρεβοβα M. 1965, աղ. 4, նկ. 3, 4, 5, 8, 9, 11, 12: Herzfeld E. 1941, էջ 133: Πορρεβοβα M. 1977, էջ 39-40): Դաշույնների երկարությունը 32-42 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի երկարության 1/3-ը: Շեղբերը հատույթում թույլ ձվածիր են, հիմնականում գուրկ կենտրոնական ողերից:

Հայկական լեռնաշխարհում այս տարբերակի բրոնզե դաշույնները հանդես են գալիս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդին: Դրա լավագույն օրինակը Կարմիր Վանքի ավիրված դամբարանաշերտից հայտնաբերված դաշույնն է, որ Հ. Մարտիրոսյանի կողմից թվագրվում է մ.թ.ա. 18-17-րդ դարերով (աղ. 23): Մեր կարծիքով, թերևս, նույն ժամանակաշրջանով պիտի թվագրվի նաև Էջմիածնի նախկին թանգարանի նմանատիպ դաշույնը (ՀՊՊԹ 712/4): Այդ են մատնանշում դաշույնի փոքր չափերը և ձգված օվալի տեսք ունեցող, հավասարաչափ նեղացող շեղբը: Այս տարբերակի զենքը Հայկական լեռնաշխարհում և Անդրկովկասում առավել տարածում է ստանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի միջնամասում (Էջմիածին, Արթիկ, Սասունիկ, Հոռոմ, Ձեմո-Բողբե), իսկ նույն զենքի երկաթից պատրաստված օրինակները (Էջմիածին, Մոսիերի, Կարմիր բլուր, Բերքաբեր, Նորուտոա) շարունակում են գործածվել նաև մ.թ.ա. 1-ին հազարամյակի առաջին քառորդին (Спицын А. 1909, էջ 11, նկ. 31: Крупнов Е. 1951, էջ 66-68, նկ. 25: Мартиросян А. 1964, էջ 50, նկ. 20/16, էջ 230, նկ. 89/1, 2: Есаян С 1966, էջ 70-73, աղ. 12, նկ. 1, 2: Хачатрян Т. 1963, էջ 52, նկ. 6: Хачатрян Т. 1975, էջ 114-115, նկ. 69: Խնկիկյան Օ. 1977, էջ 33, աղ. 5, նկ. 3, Пиотровский Б. 1959, էջ 100: Алиев В. 1973, էջ 170: Πορρεβοβα M. 1965, էջ 18: Πορρεβοβα M. 1971, էջ 91: Πορρεβοβα M.

1971a, էջ 252-262: Пицхелаури К. 1979, էջ 79-82, աղ. 1, նկ. 1: Փիլիպոսյան Ա. 1983, էջ 9-10): Թերևս հայաստանյան զինագործական արհեստանոցների արտադրանք են նաև Հայկական լեռնաշխարհի և Իրանական սարահարթի սահմանային տարածքում (ժամանակակից Ադրբեջանի հարավ-արևելյան շրջան) երբեմն հանդիպող այս տարբերակի պատահական գտածոները (Джафарзаде И. 1946, էջ 34, աղ. 3, նկ. 2: Махмудов Ф. 1970, էջ 270-273, աղ. 1, նկ. 69): Չենքի երկարությունը 22,5-69 սմ է, իսկ դաստակը կազմում է ողջ երկարության 1/3-1/5-ը: Բրոնզե դաշույնների շեղքերը հատույթում ձվածիր են, միշտ օժտված կենտրոնական ողով կամ խորադիր ակոսներով: Երկաթակուռ օրինակներինը՝ հատույթում շեղանկյուն են կամ թույլ ձվածիր և դարձյալ կենտրոնական ողեր ունեն շեղքի վրա:

Այս տարբերակին վերաբերող դաշույններ հայտնի են նաև Կովկասի Բոզվի, Ցխինվալի, Մտիրֆազ, Գսլիաթ, Ֆասկաու, Կումբուլթա, Մաջալիս բնակավայրերի հնագիտական հուշարձաններից (Йессен А. 1935, էջ. 162-163, նկ. 27: Крупнов Е. 1951, էջ. 66-68, նկ. 25: Сафронов Ф. 1966, էջ. 23-30: Вайдов Р. 1952, նկ. 1: Уварова П. 1900, աղ. 97, նկ. 4: Погребова М. 1962, էջ. 11, նկ. 3, 5: Техов Б. 1977, էջ. 7, նկ. 2/1, էջ. 54, նկ. 52/1): Նրանց երկարությունը հասնում է 38-42 սմ-ի, իսկ դաստակը կազմում է Չենքի ողջ երկարության 1/3-ը: Շեղքերը հատույթում ձվածիր են, հիմնականում զարդարված խորադիր ակոսներով:

Հատկապես ուշագրավ են այս տարբերակի Իրանական սարահարթից հայտնաբերված օրինակները (աղ. 8, նկ. 1-33, աղ. 36, աղ. 37, աղ. 38, աղ. 39, աղ. 40): Նրանց գերակշիռ մտոր ևս պատահական գտածոներ են և թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդի դամբարանային համալիրներից հայտնաբերված զուգահեռների (Բիթ-Սորգ, Կութալ-ի Գուլգուլ, Բարդ-ի Բալ, Թեփե Գիյան, Շամ-Շախալ), ինչպես նաև որոշ դաշույնների շեղքերի վերնամասում պահպանված սեպագիր արձանագրությունների շնորհիվ: Վերջիններս հիշատակվում են Բաբելոնում մ.թ.ա. 12-11-րդ դարերում իրար հաջորդած Կասսիտական և Իսսին 2-րդ հարստության տիրակալներ Նարուդողոնոսր 1-ի (մ.թ.ա. 1126-1105թթ.), Մարդուկ-Նադին-Ախխեի (մ.թ.ա. 1100-1083թթ.), Մարդուկ-Շափիկ-Չերիի (մ.թ.ա. 1082-1070թթ.), Ադադ-Աիլա-Իդդինի (մ.թ.ա. 1069-1048թթ.) և նրանց մերձավորների անունները (BMQ 1929, աղ. 4, նկ. 2: Hutchinson R. 1934, նկ. 1: Schaeffer C. 1948, աղ. 242/40, 265/16, 265/17: Tchoga-Zanbil 1968, էջ 30, նկ. 2: Dyson R. 1964, աղ. 10, նկ. 1, 2: Moorey P. 1974, նկ. 23, Dussaud R. 1938, աղ. 54: Meek T. 1939, նկ. 1: Vanden Berghe L. 1971, էջ 18, նկ. 10/5, 6: Vanden Berghe L. 1973, էջ 24-25, նկ. 2, 4, 5, 18, 19, 27, 39, 40, 42: Vanden Berghe L. 1983, էջ 158: Vanden Berghe L. 1959, էջ 91, 274-275, աղ. 117: Medvedskaya I. 1982, էջ 70-72, աղ. 9, նկ. 1, 2, 3, 11, 12, 14, 15, 179): Ըստ որում սեպագիր տեքստերով դաշույնները հայտնաբերվել են Իրանական սարահարթի միայն արևմտյան հատվածում՝ Լուրիստանում, որն էլ Ռ. Դյուսսոյին և Ռ. Պլեյներին թույլ է տվել ենթադրել, թե Չազրոսի ցեղախմբերը գործուն մասնակցություն ունենալով Բաբելոնի ռազմական ձեռնարկումներում, դրա դիմաց որպես վարձատրություն ստացել են բաբելոնյան տիրակալների անուններով արձանագրված սպառազինություն (Dussaud R. 1938, էջ 275: Pleiner R. 1967, էջ 13): Ռ. Գիրշմանը նույնիսկ հակված է կարծելու, թե լուրիստանյան սեպագիր դաշույնները և նրանց հետ հայտնաբերված սակրերը ոչ մի կապ չունեն լուրիստանյան այն համալիրների



1889
A III

հետ, որոնցում գտնվել են: Նրա կարծիքով նշված դաշույններն ու սակրերը ծխական բնույթ ունեն և Լուրիստան են ընկել կիմերների միջոցով, վերջիններիս կողմից բաբելոնյան տաճարների թալանումից հետո (Ghirshman R. 1964, էջ 283-284): Տեսակետ, որի հետ այսօր, նկատի ունենալով ձեռքի տակ առկա հարուստ և մեծաքանակ փաստացի հնագիտական նյութը, դժվար թե կարելի է համաձայնվել: Լուրիստանյան վերոհիշյալ դաշույնների տեղական արտադրության կողմնակիցն են Պ. Զալմեյերը, Պ. Մուրին և Լ. Վանդեն Բերգեն (Calmeyer P. 1969, էջ 19-39: Moorey P. 1971: Vanden Berghe L. 1968, էջ 158-159): Այս տարբերակի իրանական զենքի երկարությունը տատանվում է 36-45 սմ-ի միջև, իսկ դաստակը կազմում է ողջ երկարության 1/3-1/4-ը: Եղբերը հատույթում ձվաձիգ են կամ ձգված վեցանկյան տեսք ունեն և հիմնականում օժտված են կենտրոնական ողով:

Նմանատիպ մեկնական դաշույններ հայտնի են նաև Միջագետքից (Նինվե) և Արաբական թերակղզուց (Դուբայ) (Layard O. 1912, էջ 338-348, նկ. 96: Lombard P. 1981, էջ 87-93, աղ. 1, նկ. D): Երկուսն էլ վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին: Դաշույններից առաջինի երկարությունը 36 սմ է, իսկ երկրորդինը՝ 30 սմ: Երկուսի մոտ էլ դաստակը կազմում է զենքի ողջ երկարության 1/3-ը: Եղբերը հատույթում թույլ ձվաձիգ են՝ բացառապես զուրկ կենտրոնական ողից: Ժամանակին փորձեր են արվել (Հ. Մարտիրոսյան, Ս. Եսայան, Մ. Պոգրեբովա, Ա. Փիլիպոսյան) այս դաշույնների շարքը դասել են նաև մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբի ասսուրական բարձրաքանդակներում պատկերված քրմերի ու առասպելական էակների դաշույնները ևս, սակայն նյութի ուշադիր ուսումնասիրությունը հնարավորություն չի ընձեռում հաստատելու այդ վարկածը (բարձրաքանդակներում պատկերված զենքի տարբեր հատվածների ձևերը լավ արտահայտված չեն, որն էլ բացառում է այդ դաշույնները որոշակի խմբին դասելը) (Мартиросян А. 1964, էջ 230, նկ. 89: Есаян С. 1966, էջ 70: Погребова М. 1977, էջ 40: Budge E. 1914, աղ. 6, 8: Джафаров Г. 1984, աղ. 2, 5):

Այսպիսով, շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի երրորդ ենթախմբի երկրորդ տարբերակի ուսումնասիրությունից պարզվում է, որ այն ևս լայն տարածում ունի և հանդիպում է Միրիա-Պաղեստինյան աշխարհի, Հայկական լեռնաշխարհի, Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Իրանական սարահարթի արևմտյան շրջանների, Միջագետքի և Արաբական թերակղզու հնագիտական հուշարձաններում: Ըստ որում ամենավաղ օրինակները վերաբերում են 2-րդ հազարամյակի սկզբներին և դարձյալ վկայված են Միրիա-Պաղեստինյան աշխարհում: Այս տարբերակի զենքի ամենավաղ տարածման շրջանը մ.թ.ա. 15-11-րդ դարերն են: Այն հիմնականում կիրառությունից դուրս է գալիս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում, և միայն Հայկական լեռնաշխարհում նրա երկաթակուռ որոշ օրինակներ ավանդաբար շարունակում են օգտագործվել նաև մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներին:

Երրորդ տարբերակ (աղ. 9, նկ. 1-15) - Այս տարբերակին բնորոշ են հովհարաձև գլխիկով, հարթ, վերին ու ստորին հատվածներում քիչ լայնացող բռնակով, երկկողմանի ներճկված խաչարդով և հավասարաչափ նեղացող շեղքով օրինակները: Նախորդ տարբերակից այս դաշույններն առանձնանում են խաչարդի երկկողմանի ներճկումներով (փորվածքներով): Այս տարբերակի ամենավաղ օրինակները հանդիպում են Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկասի (Ալավերդի, Արթիկ դամբարան 3, Վերին Նավեր դամբարանաբլուր 19, Սասունիկ դամբարան 26, Կախեթիա՝ ՈՒ դարձն

դամբարան 8) հնագիտական համալիրներում (Есаян С. 1966, էջ 89, աղ. 14, նկ. 4: Хачатрян Т. 1975, էջ 178, նկ. 87/1: Хачатрян Т. 1979, էջ 110: Симосян А. 1983, էջ 93-95, նկ. 2/5: Пицхелаяри К. 1982, էջ 17-21, աղ. 21): Հայտնաբերված օրինակների մեծ մասը սերում են դամբարանային փակ համալիրներից և հավաստի թվագրումներ ունեն: Մասունիկի թիվ 26 դամբարանից (աղ. 34) հայտնաբերված բրոնզե դաշույնը, ըստ ուղեկցող հնագիտական նյութի, կարող է թվագրվել մ.թ.ա. 16-15-րդ դարերի սահմանագծով: Արթիկի թիվ 3 (աղ. 32), Ուդարնոյի թիվ 8 (աղ. 30), Վերին Նավերի թիվ 19 դամբարաններից հայտնաբերվածները մեր կարծիքով տեղավորվում են մ.թ.ա. 15-րդ դարի ժամանակագրական սահմաններում (թեև պեղող հնագետների մի մասը ժամանակին նրանց համար ավելի ընդհանուր մ.թ.ա. 15/14-13-րդ դարերի թվագրում է առաջարկել): Ըստ ամենայնի նույն թվագրումն ունի նաև Ալավերդուց հայտնաբերված բրոնզե սուրը: Այն գտնվել է մ.թ.ա. 15-13-րդ դարերով թվագրվող բրոնզե կացինների ու սակրերի գանձի հետ: Ներկայացված զենքի երկարությունը 44-55,5 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի ողջ երկարության 1/4-1/5-ը: Շեղքերը հատույթում ձվածիր են, օժտված կենտրոնական ուռուցիկ ողերով և/կամ խորադիր ակոսներով:

Նույն տարբերակին վերաբերող մի պատահական դաշույն հայտնի է նաև հյուսիս-արևմտյան Աֆրիկայից (Եգիպտոս) և, ըստ Հ. Բոննեի, թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով (Bonnet H. 1926, էջ 65, նկ. 24b): Ըստ գծանկարի դաստակը կազմում է զենքի երկարության 1/3-ը, իսկ շեղքն օժտված է կենտրոնական ողով:

Մի խիստ ուշագրավ օրինակ էլ հայտնաբերվել է Բահրեյնի Բուրայմի հնավայրի դամբարաններից մեկում (աղ. 35) և, ըստ Ջ. Բիբբիի թվագրվում է մ.թ.ա. 14-13-րդ դարերի սահմանագծով (Bibby G. 1974, էջ 277):

Առավել մեծաքանակ են այս տարբերակի դաշույնները Իրանական սարահարթի արևմտյան շրջաններում՝ հատկապես Լուրիստանում (Dussaud R. 1938, աղ. 54, 55: Meek T. 1939, նկ. 1: Medvedskaya I. 1982, էջ 70, աղ. 9, նկ. 8, 10: BMQ 1931-32, աղ. 30, նկ. a: AMI 1989, աղ. 40, նկ. 1-3): Ցավոք այստեղ հայտնաբերված օրինակների զգալի մասը պատահական գտածոներ են: Նրանցից մի քանիսի վրա պահպանվել են Բաբելոնի Իսսին 2-րդ հարստության տիրակալներ Մարդուկ-Նադին-Ախխեի (մ.թ.ա. 1100-1083թթ.) և Մարդուկ-Շամիկ-Ջերիի (մ.թ.ա. 1082-1070) անունները, որոնք էլ հնարավորություն են ընձեռում թվագրել այս տարբերակի իրանական դաշույնների հավաքածուն մ.թ.ա. 12-11-րդ դարերով: Չենքի երկարությունը 29-45 սմ է, իսկ դաստակը կազմում է նրա 1/3-1/4-ը: Շեղքերը հատույթում թույլ ձվածիր են՝ հիմնականում զուրկ կենտրոնական ողից կամ խորադիր ակոսներից:

Մտացվում է, որ նախորդ երկու տարբերակների համեմատությամբ այս տարբերակի զենքն ավելի նեղ աշխարհագրական ընդգրկում ունի և հիմնականում՝ հանդիպում է Հայկական լեռնաշխարհի, նրան հարակից Հարավային Անդրկովկասի ու Իրանական սարահարթի արևմտյան շրջանների (Լուրիստան) հնագիտական հուշարձաններում: Ըստ որում հայաստանյան օրինակները նախորդում են լուրիստանյաններին և բացառված չէ, որ նպաստել են Իրանական սարահարթում քննարկվող զինատեսակի քննարկվող տարբերակի տարածման գործին:

Չորրորդ տարբերակ (աղ. 9, նկ. 16-18) - Այս տարբերակը կազմում են շրջանաձև զլխիկով, հարթ բռնակով, երկկողմանի ներճկված խաչարդով և

հավասարաչափ նեղացող շեղքով դաշույնները (Schaeffer C. 1948, աղ. 252/29, աղ. 259/4, 10: Ghiashman R. 1939, աղ. 26, նկ. 8): Նախորդ տարբերակներից այս դաշույնները տարբերվում են գլխիկի շրջանաձև կառուցվածքով, ինչպես նաև բռնակի ու խաչարդի միացման մասում երբեմն հանդիպող հորիզոնական միջնորմի առկայությամբ: Հայտնի է այս տարբերակին վերաբերող ընդամենը հրեք օրինակ: Բոլորն էլ Թեփե Միակի B դամբարանադաշտից են: Նրանցից մեկը դամբարանային համալիրից է (Թեփե Միակ B, դամբարան 74) և քվազրվում է մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներով: Դաշույնների երկարությունը 35-40 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի երկարության 1/3-ը: Շեղքերը հատույթում ձվաձիգ են, զուրկ կենտրոնական ողից կամ խորադիր ակոսներից: Առաջավոր Ասիայի մյուս շրջաններում նման զինատեսակ չի հանդիպում և, ըստ ամենայնի, այն զուտ իրանական երևույթ է:

Հինգերորդ տատոնեակ (աղ. 9, նկ. 19-31) - Այս տարբերակին բնորոշ են հովհարաձև գլխիկը, ուղիղ-մատնեքավոր բռնակը, ուղղանկյունաձև խաչարդը, հավասարաչափ նեղացող (տերևաձև) շեղքը: Նախորդ տարբերակներից այս զենքն առանձնանում է բռնակի մատնեքավոր կառուցվածքով: Որոշ ուսումնասիրողներ (Մ. Պոզդերովա, Ի. Մեդվեդսկայա) չխորանալով շրջանակավոր դաստակով զենքի կառուցվածքային որոշ մանրամասների մեջ, այս տարբերակի դաշույնները խմբավորել են հովհարաձև գլխիկ, ուղիղ բռնակ, երկկողմանի ներճկված խաչարդ և հավասարաչափ նեղացող շեղք ունեցող (մեր դասակարգման երրորդ տարբերակ) օրինակների հետ, հավանաբար խաչարդի երկկողմանի ներճկումները համարելով բռնակի մատնեքների շարունակությունը (Порпецова М. 1977, էջ 43, աղ. 3: Medvedskaya I. 1982, էջ 68-80, աղ. 9, աղ. 10): Իրականում մենք գործ ունենք զենքի դաստակի՝ իրարից հստակ բաժանված և նշանակությամբ իրարից տարբեր երկու առանձին հատվածների ձևավորման փաստի հետ: Հետևաբար վերոհիշյալ դաշույնները նույն տարբերակում համատեղելը, մեր կարծիքով, հակասում է ներկայացվող դասակարգման սկզբունքներին:

Այս տարբերակին պատկանող դաշույնների հիմնական մասը Իրանական սարահարթի արևմտյան շրջաններից է (Dussayd R. 1938, աղ. 55: Dyson R. 1964, աղ. 9, նկ. 2: Порпецова М. 1977, էջ 43, աղ. 3, նկ. 1-7, 13: Medvedskaya I. 1982, աղ. 9, նկ. 5, 9, 13, 16: Vanden Berghe L. 1983, էջ 64, նկ. 27/5: Muscarella O. 1989, էջ 27, նկ. 5/a): Չենքի ուսումնասիրությունը մատնանշում է տեղում նման դաշույնների տարածման երկու հիմնական օջախ: Դրանցից մեկը Լուրիստանն է, որտեղից հայտնաբերված դաշույնները մեծավ մասամբ պատահական գտածոներ են և ըստ մասնագետների վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդին: Այս օջախից սերող երկու դաշույններ (մեկը պահվում է Բրիտանական թանգարանում, մյուսը՝ տիկին Ֆորուդիի մասնավոր հավաքածուում) շեղքերի վերնամասում սեպագիր տեքստեր ունեն, որոնք չեն վերծանվում: Չենքի երկարությունը 26-33 սմ է, իսկ դաստակը կազմում է նրա 1/3-ը: Շեղքերը հատույթում թույլ ձվաձիգ են՝ հիմնականում զուրկ կենտրոնական ողից և խորադիր ակոսներից:

Նույն տարբերակին պատկանող իրանական դաշույնների երկրորդ օջախը Մերձուրմիական շրջանն է (հատկապես Հասանլուն): Այս դաշույնները ևս հիմնականում պատահական գտածոներ են և մասնագետների կողմից (Ռ. Դայսոն, Մ. Պոզդերովա, Ի. Մեդվեդսկայա) քվազրվում են դարձյալ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդով: Ըստ ամենայնի մերձուրմիական ծագում ունեն նաև Նիհավենդից պատահաբար հայտնաբերված դաշույններն ու

Ֆիլադելֆիայի համալսարանի թանգարանում պահվող, Իրանից հայտնաբերված և ստույգ անձնագիր չունեցող օրինակը: Մերձուրմիական դաշույններն ունեն ուրույն կառուցվածք: Նրանց երկարությունը 42-45 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի երկարության մոտ 1/2-ը: Նման երկար դաստակներ չկան Առաջավոր Ասիայի (մաս Հին Արևելքի) մյուս շրջաններում և, հավանաբար, խոսում են զինագործության ու ռազմարվեստի տեղական առանձնահատկությունների մասին: Շեղբերը հատույթում ձվածիր են, զուրկ ողից կամ ակոսներից: Հազվադեպ հանդիպում են մաս հատույթում ձգված վեցանկյան տեսքով և կենտրոնական ողով շեղբեր: Այս տարբերակին է պատկանում մաս Հասանլուի բնակատեղիից պատահաբար հայտնաբերված և ներկայումս Մետրոպոլիտեն թանգարանում պահվող բրոնզե դաշույնիկը, որն, ըստ Օ. Մուսքարելլայի, վերաբերում է մ.թ.ա. 9-րդ դարին (Muscarella O. 1989, էջ 27, նկ. 5/a): Կառուցվածքով այն ավելի հարազատ է լուրիստանյան օջախին: Երկարությունը 10,3 սմ է, իսկ դաստակը զենքի 1/3-ն է կազմում: Շեղբը հատույթում շեղանկյան տեսք ունի և օժտված է կենտրոնական ողով:

Իրանական սարահարթի արևմտյան շրջաններից դուրս, այս տարբերակին պատկանող միակ դաշույնը հայտնաբերվել է Հայկական լեռնաշխարհում: Այն պեղվել է Շիրակավանի թիվ 6 դամբարանում (պեղող հնագետ Գ. Կարախանյան): Դաշույնի երկարությունը 30,5 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի մոտ 1/3-ը: Շեղբը հատույթում շեղանկյունաձև է՝ օժտված կենտրոնական ողով: Զննարկվող դաշույնին ուղեկցող հնագիտական նյութը պարզորոշ վերաբերում է Հայաստանի Միջին Բրոնզի շրջափուլի ավարտական փուլին, ներկայացված է սևան-արցախ-կարմիրբերդյան մշակութային խմբին բնորոշ խեցանոթներով և կարող է տեղավորվել մ.թ.ա. 17-16-րդ դարերի ժամանակագրական սահմաններում (աղ. 24): Ինչից էլ հետևում է, որ Իրանական սարահարթում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին լայն տարածում ստացած այս տարբերակի դաշույնների ու սրերի համար, հնարավոր է, նախատիպ է ծառայել Հայկական լեռնաշխարհում դեռ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ քառորդում կիրառված օրինակը:

Առաջավոր Ասիայի (մաս Հին Արևելքի) մյուս շրջաններում այս տարբերակին վերաբերող դաշույններ չեն հանդիպում:

Վեցերորդ տարբերակ (աղ. 10, նկ. 1-8) - Այս տարբերակը կազմում են հովհարաձև գլխիկով, հարթ բռնակով, ուղղանկյունաձև խաչարդով և գեղարդաձև շեղբով դաշույնները: Նախորդ տարբերակից այս դաշույններն առանձնանում են շեղբի ինքնատիպ կառուցվածքով:

Ամենավաղ օրինակը Հայկական լեռնաշխարհից է (Հառիճ, դամբարան թիվ 78), հայտնաբերվել է միջինբրոնզեդարյան (սևան-արցախյան մշակութային խմբին բնորոշ խեցանոթներ պարունակող) դամբարանային համալիրից (աղ. 25) և թվագրվում է մ.թ.ա. 17-16-րդ դարերով (Хачатрян Т. 1975, էջ 114, նկ. 69): Հայկական լեռնաշխարհից է մմանատիպ դաշույնի մեկ այլ օրինակ ևս (աղ. 10, նկ. 2): Այն պեղվել է Արտաշավանի դամբարանադաշտի թիվ 3 դամբարանում (պեղող հնագետ Գ. Մարգսյան) (աղ. 27): Դաշույնի հետ հայտնաբերված հնագիտական նյութերը (մասնավորապես՝ կարմիր մածուկով ազուցված գալաբադրոշմ նախշով անոթը) թույլ են տալիս քննարկվող դամբարանային համալիրը տեղավորել մ.թ.ա. 15-րդ դարի ժամանակագրական սահմաններում: Դաշույնների երկարությունը համապատասխանաբար 31 և 29 սմ է, իսկ դաստակը կազմում

է զենքի 1/3-ը: Շեղբերը հատույթում ձգված վեցանկյան տեսք ունեն ե օժտված են լայն կենտրոնական ողով:

Նույն տարբերակին վերաբերող մեկ դաշույն հայտնի է Սիրիա-պաղեստինյան աշխարհից և թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով (Πορσεδοβα Μ. 1962, էջ 14, նկ. 4/13): Երկարությունը 31 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-ը: Շեղբը հատույթում թույլ ձվածիր է՝ զուրկ կենտրոնական ողից: Այս տարբերակին վերաբերող չորս դաշույններ Իրանական սարահարթի արևմտյան շրջաններից են (Ilusot J.-L. 1965, ադ. 76: Tchoga-Zanbil 1968, ադ. 36, նկ. 11: Vanden Berghe L. 1983, էջ 24, նկ. 41): Դրանցից երկուսը պատահական գտածոներ են և պահվում են Լուվրում: Նրանցից մեկը շեղբի վերնամասում սեպագիր արձանագրություն ունի՝ Բարեկունի Իսսին 2-րդ հարստության տիրակալ Մարդուկ - Նադին-Ախսեի (մ.թ.ա. 1100-1083թթ.) անվամբ, որով էլ թվագրվում է: Երրորդ դաշույնը հայտնաբերվել է Լուրիստանի Կութալի Գուլգուլ հնավայրի թիվ 10 դամբարանից և թվագրվում է մ.թ.ա. 12-11-րդ դարերով (Vanden Berghe L. 1973, էջ 24): Չորրորդ դաշույնը հայտնաբերվել է Չոդա-Ջանբիլ (Դուր-Ունթաշ) բնակատեղիի պեղումների ժամանակ, մ.թ.ա. 12-11-րդ դարերով թվագրվող հնագիտական շերտից: Դաշույնների երկարությունը 32-40 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-ը: Շեղբերը հատույթում ձվածիր են կամ վեցանկյուն զծագրություն ունեն և հաճախ օժտված են կենտրոնական ողերով:

Նույն տարբերակին վերաբերող վերջին դաշույնը հայտնաբերվել է Արաբական թերակղզուց և թվագրվում է մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների սահմանագծով (Lombard P. 1981, ադ. 1, նկ. c): Դաշույնի երկարությունը 23,6 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-ը: Շեղբը հատույթում հազիվ նկատելի ձվածիր է՝ զուրկ կենտրոնական ողից և խորադիր ակոսներից:

Յոթերորդ տարբերակ (ադ. 10, նկ. 9-14) - Այս տարբերակը կազմում են հովհարածև գլխիկով, հարթ՝ վերին ու ստորին հատվածում լայնացող բռնակով, ուղղանկյունաձև խաչարդով և կեռ շեղբով դաշույններն ու սրերը (Montelius O. 1900, էջ 130-139, նկ. 338: Bonnet H. 1926, էջ 95, նկ. 44: BMQ 1929, ադ. 4: Schaeffer C. 1948, ադ. 158, նկ. 16: Πορσεδοβα Μ. 1965, էջ 14, նկ.4/16): Այսպիսի երեք բրոնզե սրեր հանդիպում են Սիրիա-պաղեստինյան աշխարհում: Նրանցից առաջինը հայտնաբերվել է Գեզերի ուշբրոնզեդարյան թիվ 30 դամբարանից և թվագրվում է մ.թ.ա. 15-14-րդ դարերով (ադ. 22, նկ. 1): Երկրորդը պատահական գտածո է, հավանաբար Ռաս-Շամրայից (ստույգ տեղը հայտնի չէ) և, ըստ Կ. Շեֆերի, թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով: Երրորդ բրոնզե սուրը հայտնաբերվել է Աշարա-Թերքայի 1991 թվականի պեղումների ընթացքում, հուշարձանի՝ մ.թ.ա. 16-15-րդ դարերով թվագրվող սենյակներից մեկի մուտքից ոչ հեռու, հարավային պատի մոտ (Masetti - Rouault M., Rouault O. 1996, էջ 181-198, նկ. 2-5): Սիրիա-պաղեստինյան օրինակների երկարությունը համապատասխանաբար 59, 65 և 78 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/5-1/6-ը: Շեղբերը հատույթում ձգված եռանկյան տեսք ունեն: Ըստ որում շեղբի սայրերից միայն մեկն է սուր (դրսի աղեղնաձևը): Նույն տարբերակին, թերևս, կարելի է դասել նաև Եգիպտոսից պատահաբար հայտնաբերված բրոնզե վաղակը (կարճ սուր), որն, ըստ Հ. Բոննեի թվագրվում է Ռամզես 3-րդի ժամանակաշրջանով (մ.թ.ա. 12-րդ դարի 1-ին կես) (Bonnet H. 1926, էջ 95: Бикерман Э. 1976, էջ 177): Վաղակը մոտավորապես 52 սմ երկարություն ունի, իսկ դաստակը կազմում է զենքի 1/4-ը: Շեղբը հատույթում եռանկյունաձև է՝ մեկ սուր սայրով:

Նույն տարբերակին պատկանող երկու պատահական գտածոների էլ, որ պահվում են Փարիզի և Նյու Յորքի քանդարաններում, մասնագետների կողմից միջազգայան և փոքրասիական ծագում է վերագրվում (Maxwell-Hislop K. 1946, էջ 43-44: Tallon F. 1987, էջ 113: Muscarella O. 1988, էջ 340: Philip G. 1989, էջ 142-143):

Այս տարբերակին պատկանող զենք հանդիպում է նաև Հայկական լեռնաշխարհում: Այն պատահաբար հայտնաբերվել է Ամիդի (Տիգրանակերտ) մոտակայքում և, դատելով շեղքին պահպանված սեպագիր արձանագրությունից, որում հիշատակված է Ադադնիրարի անունը (ըստ Օ. Մոնտելիուսի դա Ասորեստանի թագավոր Ադադնիրարի 1-ինն է), վերաբերում է մ.թ.ա. 14-13-րդ դարերի սահմանագծին, (Montelius O. 1900, նկ. 338: Մկունդ S. 1950, էջ 251, նկ. 139): Սրի երկարությունը մոտ 72 սմ է, իսկ դաստակը կազմում է ողջ երկարության 1/6-ը: Սրա շեղքը ևս հատույթում ձգված եռանկյան տեսք ունի և միայն մեկ սուր սայր:

Նույն տարբերակին կարելի է դասել նաև Իրանական սարահարթից պատահաբար հայտնաբերված և ներկայումս Բրիտանական քանդարանում պահվող դաշույնը (BMQ 1929, ադ. 4): Երկարությունը 39 սմ է, իսկ դաստակը զենքի 1/3-ն է կազմում: Շեղքը հատույթում եռանկյունի է՝ մեկ սուր սայրով: Կեռ շեղքով սրերի ու դաշույնների պատկերներ հանդիպում են նաև Թել Ամարից (Էշնուննա) հայտնաբերված և մ.թ.ա. 2-րդ հազարամյակների սահմանագծով թվագրվող կավե սալիկի, Թելլոյից (Նգիրսու) գտնված սյան շրջանաձև խարսխի (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կես), Նոր Խեթական թագավորության բարձնաքանդակների (Յազըլը քայա, Բողազքոյ) և Մեզիդոյից հայտնաբերված փղոսկրե ներդիրի (մ.թ.ա. 12-րդ դար) վրա (ИДВ 1983, էջ 320-321, նկ. 94: Bonnet H. 1926, էջ 90, նկ. 38: Макруин Дж. 1983, նկ. 7, 12: Albright W. 1954, էջ 123, նկ. 31: ИДВ 1988, էջ 280-281, նկ. 92): Հենվելով միայն շեղքերի առկայության փաստի վրա, որոշ ուսումնասիրողներ (Հ. Բոննե, Ջ. Մակքուին), փորձել են վերը նշված իրերի ու բարձրաքանդակների վրա պատկերված զենքը նույնացնել քննարկվող տարբերակը կազմող մոտիվների հետ: Մեր կարծիքով, նման զուգահեռները թեև բավական հրապուրիչ են, բայց ոչ հավաստի, հենց թեկուզ այն պատճառով, որ հնարավոր չէ ստույգ պարզել պատկերված զենքերի դաստակների կառուցվածքը: Փաստորեն այս տարբերակի զենքն Առաջավոր Ասիայում հանդես է գալիս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին և ըստ ամենայնի կապված է Միրիա-պադեստինյան զինագործության հետ:

Ութերորդ տարբերակ (ադ. 10, նկ. 15) - Այս տարբերակին բնորոշ են հովհարաձև գլխիկը, հարթ բռնակը, զանգվածեղ, քառակուսի՝ երիզներից զուրկ խաչարդը և կեռ շեղքը՝: Հայտնի է միայն մեկ օրինակ: Այն ոչ մեծ դանակ է, որ գտնվել է Լճաշենի 3-րդ դամբարանաբլրի պեղումներից և ըստ ուղեկցող հնագիտական նյութի թվագրվում է մ.թ.ա. 15-րդ դարով: Երկարությունը 20,5 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-ը: Շեղքը հատույթում ձգված եռանկյան տեսք ունի և մեկ կտրող սայր:

Իններորդ տարբերակ (ադ. 11, նկ. 1-4) - Այս տարբերակը կազմում են կորնթարդ գլխիկով, հարթ բռնակով, ուղղանկյունաձև խաչարդով,

* Տեսականորեն այս դանակը կարելի է դասել նախորդ՝ 7-րդ տարբերակի զենքերի շարքը, սակայն քառակուսի, զանգվածեղ, երիզներից զուրկ խաչարդի առկայությունը մեզ դրդեց այն առանձնացնել ինքնուրույն տարբերակում:

հավասարաչափ նեղացող շեղքով և սուր սայրով կարճ սրերը: Այս զենքը հանդիպում է բացառապես Հայկական լեռնաշխարհում և նրան հարակից Հարավային Անդրկովկասում: Առաջին սուրը հայտնաբերվել է Լճաշենի թիվ 98 դամբարանից և ըստ ուղեկցող հնագիտական նյութի (աղ. 42) թվագրվում է մ.թ.ա. 15-14-րդ դարերով: Նմանատիպ երկու սրեր հայտնի են Հարավային Անդրկովկասի (Ժամանակակից հարավային Վրաստան), Թրեյի (դամբարան 37) (աղ. 44) և Ջեմո-Բողբե (դամբարանաբլուր 4) (աղ. 43) հնավայրերի պեղումներից և ըստ ուղեկցող հնագիտական նյութի դարձյալ թվագրվում են մ.թ.ա. 15-14-րդ դարերով (Тбилиси I, 1978, էջ 70-72, նկ. 31: Пицхелаური К. 1979, էջ 79-82, աղ. 6, նկ. 1): Սրերի երկարությունը 42,5-46 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի մոտ 1/4-ը: Շեղքերը հատույթում ձվաձիթ են՝ օժտված կենտրոնական ողերով:

Առաջավոր Ասիայի (նաև Հին Արևելքի) մյուս շրջաններում այս տարբերակին վերաբերող օրինակներ մեզ հայտնի չեն:

Տասներորդ տարբերակ (աղ. 11, նկ. 5-29, աղ. 12, նկ. 1-30) - Սրանք կորնթարդ գլխիկով, հարթ բռնակով, շրիշակավոր (ձողաձև) խաչարդով և հավասարաչափ նեղացող շեղքով դաշույններ ու սրեր են: Նախորդ տարբերակից ունեցած միակ տարբերությունը երիզներից գուրկ, շրիշակավոր նեղ խաչարդի առկայությունն է: Այս տարբերակի դաշույններն ու սրերը նույնպես հիմնականում տարածված են Հայկական լեռնաշխարհում և նրան հարակից շրջաններում: Հանդիպում են Լճաշենի, Գավառի (Նոր Բայազետ), Ներքին Գետաշենի (աղ. 46, աղ. 49), Նորատոռի (աղ. 55), Սարուխանի (աղ. 51), Խրտանոցի, Դիլիջանի, Վանաձորի, Արթիկի, Օշականի, Մեծամորի, Էլարի, Աղավնաձորի (աղ. 45), Էջմիածնի, Կարսի, Մեղրու, Կապանի, Տանձավերի, Նորաշենիկի (աղ. 54), Նոր Առաջաձորի և Հայաստանի ու Արցախի համաժամանակյա այլ հնագիտական համալիրներում (Уварова П. 1900, էջ 283, նկ. 459: Ивановский А. 1911, աղ. 3, նկ. 9: Мартиросян А. 1954, էջ 21, նկ. 5: Мартиросян А. 1964, էջ 193-194, նկ. 76: Есаян С. 1966, էջ 63-66, աղ. 11, նկ. 9: Хачатрян Т. 1975, էջ 200-201, նկ. 113/1, 3, 4, 114/2, 3: Даниелян О. 1973, էջ 102-113, աղ. 1, նկ. 1: Хачатрян Т. 1979, էջ 109, 184, 265: Հասրաթյան Մ. 1985, էջ 214, աղ. 4: Բիյազով Լ. 1985, էջ 68-74, աղ. 2/2: Խնկիկյան Օ. 1991, էջ 88, աղ. 2): Նկատվում է այս տարբերակին պատկանող դաշույնների ու սրերի պատրաստման երկու եղանակ. ա) զենքի կորնթարդ գլխիկներն ամրացված են բռնակին (աղ. 11, նկ. 5-29, աղ. 12, նկ. 1-22), բ) անջատ են բռնակից և հազում են փայտե միջնապատի կամ ներդիրների վրա (աղ. 12, նկ. 23-30): Ավելացնենք նաև, որ ժամանակին առաջ քաշված այն միտքը (Հ.Մարտիրոսյան, Թ. Խաչատրյան, Ս.Եսայան), թե առաջին եղանակի օրինակները միաձույլ են (այսինքն դաշույնն ամբողջությամբ ձուլվել է մեկ կաղապարում), չի հաստատվում վերոհիշյալ զենքի մանրագին ուսումնասիրության արդյունքներով (ռենտգենյան ճառագայթներով արված լուսանկարի վրա պարզ նկատվում են գլխիկի և բռնակի զոդման կարի հետքերը): Հանգամանք, որն ավելի է հաստատում երկու եղանակով պատրաստված դաշույնների ու սրերի նույնությունը: Ջինագործական նշված երկու եղանակների առկայությունը ոչ կառուցվածքային, ոչ էլ ձևաբանական առումով չեն փոխում քննարկվող զենքի նկարագիրը, որի պատճառով մենք նպատակահարմար ենք գտել երկու եղանակով պատրաստված դաշույններն էլ ընդգրկել մեկ ընդհանուր տարբերակի մեջ: Պետք է ավելացնել նաև, որ

հնագետների գերակշիռ մասը, նկատի ունենալով քննարկվող զենքի որոշ օրինակների բռնակի արտաքին կտրավուն տեսքը, այն սխալմամբ նույնացրել է խողովակադաստակ դաշույնների խմբի հետ: Իրականում այս տարբերակն ունի շրջանակավոր կառուցվածք: Պարզապես ի տարբերություն շրջանակավոր դաստակով մյուս դաշույնների ու սրերի, վերջիններիս բռնակի երկզներն ավելի երկար են և զենքի որոշ օրինակներում ընդհուպ մոտենալով իրար, երբեմն խողովակի տպավորություն են ստեղծում՝ իրականում պահպանելով դաստակի շրջանակավոր կառուցվածքը:

Այս տարբերակի դաշույնների ու սրերի օգտագործման հիմնական ժամանակաշրջանը մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսն է, թեև որոշ ուսումնասիրողներ (Ս. Եսայան, Օ. Խնկիկյան) այս տարբերակին վերաբերող մի քանի օրինակներ (մասնավորապես Խրտանոցի, Մեղրու, Կապանի, Տանձավերի, Նոր Առաջածորի դաշույնները) թվագրում են մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին քառորդով: Նման ուշ թվագրման հիմնական կռվանը, որքան մեզ հայտնի է, Խրտանոցից (Դիլիջանի մոտ) 1929 թ. հայտնաբերված դաշույնն է (մյուս օրինակները պատահական գտածոներ են), որ կարծես թե սերում է մ.թ.ա. 8-7-րդ դարերի հնագիտական նյութ պարունակող դամբարանից (Ա. Խաչատրյանի պեղումներ): Նախ, պետք է նշել, որ քննարկվող դամբարանային համալիրը (ինչպես նաև Խրտանոցի 1929 թվի ողջ հավաքածուն) ոչ այնքան սիստեմատիկ պեղումների, որքան հավաքչական աշխատանքների արդյունք է և, այս իսկ առումով, չի կարող միանշանակ հավաստի համարվել: Մյուս կողմից քննարկվող դամբարանում չի բացառվում կրկնակի թաղման հանգամանքը, որը կարող էր և չնկատել պեղողը: Եվ ընդհանրապես իրենց նյութով, պատրաստման եղանակով և արտաքին ձևավորմամբ Խրտանոցի, Մեղրու, Կապանի, Տանձավերի և Նոր Առաջածորի դաշույններն, ինչ խոսք, ավելի հարազատ են Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսի զինագործական ավանդույթներին, քան մ.թ.ա. 8-7-րդ դարերի երկմետաղյա կամ երկաթե զինատեսակներին: Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված այս տարբերակի դաշույնների չափերը տատանվում են 26,5-38 սմ-ի միջև, իսկ սրերինը հասնում է 70-72 սմ-ի: Դաստակը կազմում է զենքի ողջ երկարության 1/3-1/6-ը: Շեղբերը հատույթում ձգված վեցանկյան, շեղանկյան կամ թույլ ձվածիր գծագրություն ունեն, միշտ օժտված կենտրոնական ողով և/կամ խորադիր ակոսներով:

Նույն տարբերակին պատկանող դաշույններ ու սրեր հանդիպում են նաև Հայկական լեռնաշխարհին հարակից շրջաններում: Մասնավորապես Հարավային Վրաստանի՝ Սամթավրոյի, Մցխեթի (աղ. 47), Ալազան գետի հովտի, Կախեթիայի (Մելանի, դամբարանադաշտ «Պերեբի» դամբարան 6) (աղ. 48), ինչպես նաև ժամանակակից Ադրբեջանի՝ Խանլարի ու Մինգչաուրի հնագիտական համալիրներում և թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսով (Կուբիձե Ա. 1981, աղ. 14, նկ. 30, աղ. 21, նկ. 46, աղ. 32, նկ. 28, աղ. 38, նկ. 42, աղ. 48, նկ. 20, աղ. 49, նկ. 15, աղ. 50, նկ. 8, աղ. 51, նկ. 16: Пицхелаური К. 1979, աղ. 30: Абдушелашвили М. 1980, էջ 71, աղ. XIa: Садрадзе В. 1991, աղ. XV-XVI: Кушнарева К. 1957, էջ 162, աղ. 7, նկ. 7: Ломтатидзе Г. 1974, էջ 164-167: Асланов Г., Ваидов Р., Ионе Г. 1959, էջ 62-70, նկ. 53, աղ. 13, նկ. 4, 5, 9): Չենքի երկարությունը 28-35 սմ է, իսկ դաստակը կազմում է նրա 1/3-ը: Շեղբերը հատույթում ձվածիր կամ շեղանկյունաձև գծագրություն ունեն և օժտված են կենտրոնական ողով: Հայկական լեռնաշխարհից դուրս այս տարբերակին վերաբերող մեկական

օրինակներ հանդիպում են Եգիպտոսում (Bonnet H. 1926, էջ 75, նկ. 24/a), Հյուսիսային Կովկասում (Техов Б. 1977, էջ 33, նկ. 33), Իրանական Թալիշում (Schaeffer C. 1948, աղ. 231, նկ. 3) և Չինաստանում (Поррелова М., Членова И. 1970, էջ 292, նկ. 1): Եգիպտոսի դաշույնը հայտնաբերվել է 19-րդ հարստության ժամանակաշրջանին պատկանող դամբարանից (մ.թ.ա. 13-րդ դար): Մյուս երեք դաշույնները պատահական գտածոներ են:

Տասնմեկերորդ տարբերակ (աղ. 13, նկ. 1-8) - Այս տարբերակի զենքն ունի հովհարաձև գլխիկ, հարթ բռնակ, շրիշակավոր (ձողաձև) խաչարդ և հավասարաչափ նեղացող շեղք: Չենքի նախորդ տարբերակից սրանք առանձնանում են գլխիկի հովհարաձև կառուցվածքով: Այս տարբերակին պատկանող դաշույններն ու սրերը հայտնի են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջաններից (Դիլիջան, Գոլովինո, Քեթի, Ալավերդի, Տավուշ, Վանաձոր) (աղ. 50, աղ. 52) և ժամանակին մասնագետների կողմից թվագրվել են մ.թ.ա. 13-12-րդ դարերով (Мнацаканян А. 1952, էջ 62-71: Մնացականյան Հ. 1959, էջ 30: Мартиросян А. 1964, էջ 117-118, նկ. 48/1: Есаян А. 1966, էջ 87-90, աղ. 14, նկ. 5, 6: Եսայան Ս., Հովհաննիսյան Հ. 1969, աղ. 20, նկ. 5: Петросян Л. 1989, էջ 56, աղ. 48, նկ. 1): Դատելով վերոհիշյալ համալիրների հնագիտական նյութերից, մեր կարծիքով, ավելի հավանական կլինեք քննարկվող դամբարանները թվագրել մ.թ.ա. 14-13-րդ դարերով: Նույն թվագրումն ունեն նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան և հարակից շրջաններից (ժամանակակից Ադրբեջանի տարածք՝ Գետաբակ, Մինգեչաուր) հայտնաբերված օրինակները (Казиев С. 1949, էջ 15, նկ. 3a: Казиев С. 1951, էջ 10, աղ. 8, նկ. 3):

Չենքի տակ եղած գրականությունը հնարավորություն չի տալիս պնդելու այս տարբերակի դաշույնների ու սրերի առկայությունը ժամանակակից Հարավային Վրաստանում, թեև տեսականորեն նրանք, պետք է որ հանդիպեին Կախեթիայի համաժամանակյա հնագիտական համալիրներում: Իրականում այստեղ լայն տարածում ունեն արտաքուստ վերոհիշյալ տարբերակին մոտ, իսկ կառուցվածքով խողովակադաստակ դաշույններ ու սրեր, որ գրականության մեջ «կախեթական տիպ» պայմանական անուն են ստացել (Йессен А. 1935, նկ. 24/2: Пиотровский Б. 1949, աղ. 7: Пицхелаури К. 1959, էջ 111-117, 123-124: Ломтатидзе Г. 1974, էջ 165-167):

Քննարկվող տարբերակի զենքի երկարությունը 58-72 սմ է, իսկ դաստակը կազմում է նրա 1/5-1/6-ը: Շեղքերը հատույթում ձվաձիգ են, միշտ օժտված կենտրոնական ողով ե խորադիր ակոսներով: Առաջավոր Ասիայի մյուս շրջաններում այս տարբերակին պատկանող դաշույններ ու սրեր չեն հանդիպում:

Տասներկուերորդ տարբերակ (աղ. 13, նկ. 9-23) - Այս տարբերակին բնորոշ են հովհարաձև գլխիկը, հարթ բռնակը, երիզներից զուրկ, ուղղանկյունաձև զանգվածեղ խաչարդը և հավասարաչափ նեղացող շեղքը: Նրանք հանդիպում են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջաններում (Դիլիջան, Մալիտակ, Լորուտ), ինչպես նաև նրան հյուսիս-արևելքից հարակից տարածքում (Գետաբակ, Մինգեչաուր) (Եսայան Ս., Հովհաննիսյան Հ. 1969, էջ 92, աղ. 1, նկ. 4: Խնկիկյան Օ. 1991, էջ 88, աղ. 2, նկ. 6: Асланов Г., Ваидов Р., Ионе Г. 1959, էջ 78, աղ. 13, նկ. 1-3: Халилов Д. 1985, էջ 45, 132, աղ. 18, նկ. 2, 3):

Չենքի երկարությունը 36-72 սմ է, իսկ դաստակը կազմում է ողջ երկարության 1/3-1/6-ը: Շեղբերը հատույթում թույլ ձվածիր են՝ միշտ օժտված կենտրոնական ողով:

Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջաններից դուրս այս տարբերակին վերաբերող դաշույններ հանդիպում են Հյուսիսային Կովկասում (Թլի, Կոբան, Վերին Ռուֆսա) (Уварова П. 1900, աղ. 301, նկ. 4-6: Техов Б. 1977, էջ 99-100, աղ. 88, նկ. 1-5: Техов Б. 1965, էջ 150-151, նկ. 9, 20, 21) և թվագրվում մ.թ.ա. 14-12-րդ դարերով: Ինչպես գտնում են մասնագետները, այս դաշույնները բնորոշ չեն կովկասյան զինագործությանը և, ըստ ամենայնի, ստեղծվել են անդրկովկասյան զենքի կրկնօրինակման և տեղական մանրամասների (բռնակի ցանցկեն միջնապատի) համադրման շնորհիվ (Техов Б. 1977, էջ 101): Առաջավոր Ասիայի (նաև Հին Արևելքի) մյուս շրջաններում այս տարբերակը նույնպես վկայված չէ:

Տասներեքերորդ տարբերակ (աղ. 14, նկ. 1-21) - Սրանք թամբաձև գլխիկով, հարթ (երբեմն միջնորմավոր) բռնակով, ուղղանկյունաձև զանգվածեղ խաչարդով և հավասարաչափ նեղացող շեղբով բրոնզե դաշույններն ու սրերն են: Քննարկվող զենքի մյուս օրինակներից տարբերվում են գլխիկի թամբաձև կառուցվածքով: Վերջինս իր դիրքով ուղղահայաց է ինչպես բռնակին, այնպես էլ շեղբին (այսինքն՝ զենքին ամրացված է վերջիններիս նկատմամբ 90° կազմող անկյան տակ) և որոշ ուսումնասիրողների կարծիքով (Ա. Գոդար, Ֆ. Հանչար) մարտի ժամանակ պահպանել է ձեռքի ասիլը հակառակորդի զենքի հարվածներից (Hancar F. 1934, էջ 78):

Հայկական լեռնաշխարհում այս զինատեսակը հանդիպում է Արմավիրի, Նոր Բայազետի (Կամո), Ադիամանի (Ներքին Գետաշեն), Հացառատի, Չոլաքարի (աղ. 56), Վանաձորի, Ջուղայի, Առաջածորի և Խանլարի հնագիտական հուշարձաններից: Ըստ որում դրանց մի մասը սերում է փակ համալիրներից և հավաստի թվագրվում մ.թ.ա. 12-10-րդ դարերով (Լալայան Ե. 1931, էջ 99-100: Гуммель Я. 1931, էջ 14, աղ. 1, նկ. 12: Гуммель Я. 1939, նկ. 1: Пиотровский Б. 1949, աղ. 6: Кушнарева К. 1957, էջ 136-137, նկ. 2: Мартиросян А. 1964, էջ 155, նկ. 63/1, 2: Есаян С. 1966, աղ. 12, նկ. 5: Մարտիրոսյան Հ. 1969, աղ. 19, նկ. 4: Խնկիկյան Օ. 1977, էջ 33, աղ. 5, նկ. 9: Փիլիպոսյան Ա. 1979, էջ 39-40): Երկար ժամանակ իշխում էր այն կարծիքը (Հ. Մարտիրոսյան, Մ. Եսայան), որ այս դաշույններն ու կարճ սրերը միաձույլ են, սակայն մնանատիպ զենքի մեխանիկական և ռենտգենագրաֆիական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սրանց դաստակներն ու շեղբերը ձուլվել են առանձին կաղապարներում և ապա զոդվել իրար (Maxwell-Hislop K., Houdges H. 1966, աղ. 4, նկ. 1): Մասնավորապես այդ է մատնանշում նաև Վանաձորի դաշույնը, որի բռնակին արված միջանցիկ փորվածքներում պարզորոշ նկատվում է նրանից առանձին ձուլված շեղբի պոչուկը: Այս դաշույնը ուշագրավ է նաև նրանով, որ գալիս է հաստատելու վերևում առաջ քաշված մեր այն կարծիքը, համաձայն որի, շրջանակավոր դաստակով զենքը պոչուկավոր դաշույնների աստիճանական զարգացման արդյունք է: Այդ փոխակերպման արձագանքները Հայկական լեռնաշխարհում փաստորեն նկատվում են շրջանակավոր դաստակով դաշույնների հազարամյա օգտագործումից հետո անգամ: Հայաստանյան օրինակների երկարությունը տատանվում է 29,5 - 50 սմ-ի միջև, իսկ դաստակը

կազմում է զենքի 1/3-1/4-ը: Շեղբերը հատույթում հիմնականում շեղանկյուն գծագրություն ունեն և միշտ օժտված են կենտրոնական ողով:

Այս տարբերակին պատկանող չորս դաշույններ հանդիպում են Հայկական լեռնաշխարհի հարակից շրջաններից (ժամանակակից Ադրբեջանի տարածք՝ Մինգեչաուր, Խիշկիդերե) և դարձյալ թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերով (Асланов Г., Ваидов Р., Ионе Г. 1959, էջ 78-79, աղ. 13, նկ. 7: Капкай М., Селимжанов И. 1973, էջ 126, 212, աղ. 25/19, 21, նկ. 18/19, 21): Սրանք 28-36,5 սմ երկարություն ունեն, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-ը: Շեղբերը հատույթում ձվաձիթ են՝ գուրկ կենտրոնական ողերից:

Հաջորդ տարածաշրջանը, ուր վկայված են այս տարբերակին վերաբերող դաշույններ, Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան շրջաններն են (հատկապես Թալիշը) (Schaeffer C. 1948, աղ. 217/14, 223, 227/10, 237/24: Vanden Berghe L. 1964, աղ. 34, նկ. 226: Negahban E. 1964, նկ. 51): Հանդիպում են նրանք Աղա-Էվլարի, Վերիի, Չիլս-Խանեի հնագիտական համալիրներից և թվագրվում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդով: Իրանական սարահարթում, Թաղիշից հարավ, այս տարբերակի դաշույնները հազվադեպ են: Մեկական օրինակ հանդիպում են Մարլիկի և Խուրվիմի հնավայրերից և դարձյալ վերաբերում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին:

Իրանական դաշույնների երկարությունը 29-37 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-ը: Շեղբերը հատույթում շեղանկյունաձև են՝ հիմնականում օժտված կենտրոնական ողով:

Հայկական լեռնաշխարհից և Իրանական սարահարթի արևմտյան շրջաններից դուրս հանդիպում են այս տարբերակին պատկանող դաշույնների եզակի օրինակներ: Սրանցից մեկը պատահաբար գտնվել է Կրասնոյարսկի երկրամասում և, ըստ Ն. Չլենովայի, վերաբերում է մ.թ.ա. 1-ին հազարամյակին (Членова Н. 1971, էջ 33, նկ. 33/2, 3): Փոքր-ինչ վերապահումով այս տարբերակին կարելի է դասել նաև Պակիստանի Ֆորտ-Մունրո բնակավայրից հայտնաբերված կարճ սուրը (Lal B. 1951, նկ. 8: Πορρεβοва М. 1977, էջ 67, աղ. 10, նկ. 6), որը Ռ. Հեյնե-Գելդերնի կարծիքով արևմտաիրանական ծագում ունի և Արևելք է տարվել արիական ցեղերի կողմից (Heine-Geldern R. 1956): Ներկայումս Ֆորտ-Մունրոյի և Կրասնոյարսկի դաշույններին անդրկովկասյան ծագում է վերագրվում (Порребова М., Членова Н. 1970, էջ 294):

Փորձեր են արվել քննարկվող տարբերակի դաշույնների թվին դասել նաև Ղազախստանի արևմտյան շրջաններից (Տեկելի) պատահաբար հայտնաբերված բրոնզե դաշույնը (Акишев К., Акишев А. 1978, էջ 59-62, նկ. 9: Членова Н. 1982, էջ 34-35, նկ. 1): Սակայն վերջինիս դաստակի խողովակավոր կառուցվածքը բացառում է այդ հանգամանքը:

Այսպիսով, քննարկված օրինակների հիման վրա կարելի է պնդել, որ տասներեքերորդ տարբերակի դաշույններն առավելապես Հայկական լեռնաշխարհի արևելյան (հատկապես Սևանի ավազան, Արցախ) և Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան (հիմնականում Թալիշ) շրջաններին բնորոշ զինատեսակ են և վկայում են երկու հարակից տարածքներում գոյություն ունեցած զիազորժական ընդհանրությունների մասին:

Տասնչորսերորդ տարբերակ (աղ. 14, նկ. 22-24) - Այս տարբերակի դաշույններին բնորոշ են թամբաձև գլխիկը, մատներավոր բռնակը,

ուղղանկյունաձև զանգվածեղ խաչարդը և հավասարաչափ նեղացող շեղքը: Նախորդ տարբերակից այս զենքը առանձնանում է բռնակի մատնեքավոր կառուցվածքով: Հայտնի է ընդամենը երեք օրինակ: Դրանցից երկուսը Իրանական սարահարթից են (Մարլիկ թեփե, Լահիջան-Ռեշտ) և թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջով (Negahban E. 1964, նկ. 48: Medvedskaya I. 1982, էջ 73, նկ. 9/24: Maxwell-Hislop K. 1962, էջ 59-62, էջ 126-130, աղ. 39, նկ. 1): Երրորդը պատահական գտածո է Եգիպտոսից և, ըստ ամենայնի, նույն ժամանակաշրջանով է թվագրվում (Bonnet H. 1926, էջ 65, նկ. 24/c): Դաշույնների երկարությունը 34-35 սմ է, իսկ դաստակը կազմում է նրա 1/3-ը: Շեղքերը հատույթում ձվաձիթ են՝ օժտված կենտրոնական ողով:

Տասնհինգերորդ տարբերակ (աղ. 14, նկ. 25-26) - Այս տարբերակին բնորոշ են թամբաձև գլխիկով, հարթ բռնակով, երկկողմանի ներճկված խաչարդով և հավասարաչափ նեղացող շեղքով դաշույնները: Հայտնի է այս տարբերակին վերաբերող ընդամենը երկու դաշույն: Երկուսն էլ պատահական գտածոներ են Իրանական սարահարթի արևմտյան շրջաններից (Լուրիստան) և Կ. Շաֆերի կարծիքով վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդին (Schaeffer C. 1948, աղ. 256/18, 19): Դաշույնների երկարությունը (մեկի շեղքը թերի է) պետք է , որ մոտավորապես 36-38 սմ լինի, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-ը: Շեղքերը հատույթում շեղանկյան ու ձգված վեցանկյան տեսք ունեն և օժտված են կենտրոնական ողերով:

Տասնվեցերորդ տարբերակ (աղ. 15, նկ. 1-2) - Այս տարբերակը կազմում են հովհարաձև գլխիկով, հարթ բռնակով, եղջյուրավոր խաչարդով և հավասարաչափ նեղացող շեղքով երկու սրերը: Հայտնի են նրանք առայժմ միայն Էգեյան աշխարհից և վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին (Perrot J., Chippiez Ch. 1894, էջ 976, նկ. 551: Anati E. 1968, էջ 70, նկ. 31/3: Buchholz H.-G., Karageorghis V. 1972, էջ 57, նկ. 24): Սրերի երկարությունը 65-70 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/5-ը: Շեղքերը հատույթում թույլ ձվաձիթ են՝ օժտված կենտրոնական ողով:

Տասնյոթերորդ տարբերակ (աղ. 15, նկ. 3-4) - Միայն Էգեյան աշխարհում են հանդիպում մաև այս տարբերակի սրերը: Սրանք ունեն կորնթարդ գլխիկ, ուղիղ բռնակ, եղջյուրավոր խաչարդ և հավասարաչափ նեղացող շեղք: Երկու սրերն էլ Կրետեից են և վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին (Evans A. 1964, էջ 849-850: Anati E. 1968, էջ 70, նկ. 34/1): Ունեն մոտավորապես 65-70 սմ երկարություն, իսկ դաստակը կազմում է զենքի 1/5-ը: Շեղքերը հատույթում թույլ ձվաձիթ են՝ օժտված կենտրոնական ողերով:

Տասնութերորդ տարբերակ (աղ. 15, նկ. 5-14) - Այս տարբերակը կազմում են հովհարաձև գլխիկով, հարթ բռնակով, եղանաձև խաչարդով և հավասարաչափ նեղացող շեղքով դաշույններն ու սրերը: Սրանց ուրույն առանձնահատկությունը բռնակի ստորին վերջույթից սկսվող և շեղքի վերնամասի սայրերը (ուսերը) գրկող եղանաձև հաստացումն է: Դաշույնների ու սրերի այս տարբերակի գերակշիռ մասը դարձյալ Էգեյան աշխարհից են (Աթենք, Միքենե) և վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդին (Folstny S. 1961, էջ 289, աղ. 95, նկ. 1/1: Anati E. 1968, էջ 70, նկ. 31/1, 2: Блаватская Т. 1976, նկ. 14): Նույն շարքում, մեր կարծիքով, պետք է քննարկել մաև Կիպրոսից (Նիկոսիա) պատահաբար հայտնաբերված և, ըստ Կ. Նիկոլաուի, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջով թվագրվող բրոնզե դաշույնը (Nicolaou K. 1973, էջ 425, աղ. 80/9): Չենքի երկարությունը 19,5-72,5 սմ է, իսկ

դաստակը կազմում է ողջ երկարության 1/3-1/6-ը: Շեղբերը եատույթում թույլ ձվածիր են՝ հիմնականում գուրկ կենտրոնական ողբից:

Նույն տարբերակին է պատկանում նաև Աշշուրի Անու-Աղաղ աստվածությունների տաճարի պեղումներից հայտնաբերված դաշույնիկը, որ թվագրվում է մ.թ.ա. 9-րդ դարով (Andrae W. 1909, էջ 53: Bonnet H. 1926, էջ 21, նկ. 9: Πορσεβοβα Μ. 1977, էջ 41: Πορσεβοβα Μ. 1965, էջ 12-13): Դաշույնի երկարությունը 15 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի մոտ 1/3-ը: Շեղբը հատույթում շեղանկյուն է՝ օժտված կենտրոնական ողով (աղ. 15, նկ. 11):

Որոշ վերապահումով (նկատի ունենալով բռնակի և գլխիկի ինքնատիպ գծագրությունը) այս տարբերակի զենքերի շարքը կարող են դասվել Կոլխիդայից (Արևմտյան Վրաստան) և Հյուսիսային Կովկասից (Թի) հայտնաբերված երեք դաշույնները (աղ. 15, նկ. 12-14), որոնք, ըստ մասնագետների, թվագրվում են մ.թ.ա. 10-7-րդ դարերով (Техов В. 1977, էջ 107-109, նկ. 89/7, 14: Микеладзе Т., Мигдисова Н., Папуашвили Р. 1985, էջ 37-40, աղ. 53):

Տասնիններորդ տարբերակ (աղ. 16, նկ. 1) - Այս տարբերակն առայժմ ներկայացված է մեկ օրինակով: Այն Լճաշենի 10-րդ դամբարանաբլրից հայտնաբերված կարճ սուրն է, որն ըստ ուղեկցող հնագիտական նյութերի (աղ. 41) թվագրվում է մ.թ.ա. 15-րդ դարով (Есаян С. 1966, էջ 85-89, աղ. 14, նկ. 2): Ուժնի կորնթարդ գլխիկ, հարթ բռնակ, պայտածև խաչարդ և հավասարաչափ նեղացող շեղբ: Այս տարբերակի յուրօրինակությունը՝ բռնակի ստորին վերջավորության վերաճումն է պայտածև խաչարդի: Սրի երկարությունը 58 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/5-ը: Շեղբը հատույթում ձվածիր է՝ օժտված կենտրոնական ողով և խորադիր ակոսներով:

Քսաներորդ տարբերակ (աղ. 16, նկ. 2-14) - Այս տարբերակին բնորոշ են հովհարածև գլխիկը, հարթ բռնակը, պայտածև խաչարդը և հավասարաչափ նեղացող շեղբը: Նախորդ տարբերակից առանձնանում են գլխիկի հովհարածև կառուցվածքով:

Նրանց գերակշիռ մասը արևմտաիրանական ծագում ունեն և հանդիպում են Թալիշի (Աղա-Էվլար, Չիլա-Խանե, Վերի, Շագուլա-Դերե), Խուրվիհի և Մարլիկի հնագիտական հուշարձաններից (Morgan J. 1896, նկ. 63: Schaeffer C. 1948, աղ. 217/3, 219/1, 227/8, 231/1: Dyson R. 1964, աղ. 9: Vanden Berghe L. 1964, աղ. 34, նկ. 227: Negahban E. 1964, նկ. 47): Ըստ ամենայնի, իր ծագմամբ Իրանական Թալիշին է պատկանում ժամանակակից Աղբբեջանի հարավային շրջաններից (Մասսալի) պատահաբար հայտնաբերված դաշույնը ևս (Кашкай М., Селимханов И. 1973, էջ 88, աղ. 22/9, էջ 186, նկ. 15/9):

Իրանական դաշույնների զգալի մասը պատահական գտածոներ են և մասնագետների կարծիքով տեղավորվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջի-մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբի ժամանակագրական սահմաններում (Πορσεβοβα Μ. 1977, էջ 47-48): Չենքի երկարությունը 31-42 սմ է, իսկ դաստակը կազմում է նրա 1/3-1/4-ը: Շեղբերը հատույթում ձվածիր են, միշտ օժտված կենտրոնական ողով:

Իրանական սարահարթից դուրս այս տարբերակը հանդիպում է միայն Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջանում: Նման երկու դաշույններ գտնվել են Գետաբեկի (դամբարան 23) և Հոռոմի (դամբարան 87, պեղող հնագետ Ռ. Բաղայան) դամբարաններից և ըստ ամենայնի վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին: Նրանք մոտ 30 սմ (Գետաբեկի դաշույնի

շեղքի ստորին մասը բացակայում է) և 47 սմ երկարություն ունեն, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-1/4-ը: Շեղքերը հատույթում ձվաձիթ են՝ օժտված կենտրոնական ողով և խորադիր ակոսներով:

Քսանմեկերորդ տարբերակ (աղ. 16, նկ. 17-23) - Այս տարբերակին բնորոշ են հովհարածև գլխիկը, մատնեքավոր բռնակը, պայտածև խաչարդն ու հավասարաչափ նեղացող շեղքը: Նախորդ տարբերակից այս զինատեսակն առանձնանում է բռնակի մատնեքավոր կառուցվածքով:

Նման դաշույններ հանդիպում են Իրանական սարահարթի արևմտյան շրջաններում (Վերի, Թուլու, Քալարդաշտ, Գողին-թեփե) և թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջով (Schaeffer C. 1948, աղ. 227/1, 236/1: Samadi H. 1959, նկ. 18, Young C. 1969, էջ 38, աղ. 25, նկ. 11: Medvedskaya I. 1982, աղ. 9, նկ. 21,22): Դաշույնների երկարությունը 34-42 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-1/4-ը: Շեղքերը հատույթում ձվաձիթ են, միշտ օժտված կենտրոնական ողերով:

Քսաներկուերորդ տարբերակ (աղ. 16, նկ. 16) - Այս տարբերակը ներկայացված է Թեյ-Աչանայից (Ալախա) հայտնաբերված մեկ կարճ սրով: Այն ունի մահիկածև, երիզներից զուրկ զանգվածեղ գլխիկ, երիզների երկկողմանի եռանկյունաձև աճուկներով՝ հարթ բռնակ, զանգվածեղ ուղղանկյունաձև (քիչ վեր ճկված) խաչարդ և հավասարաչափ նեղացող շեղք: Նախորդ տարբերակից առանձնանում է գլխիկի մահիկածև կառուցվածքով: Ըստ Կ. Շեֆերի վերաբերում է մ.թ.ա. 14-13-րդ դարերին (Schaeffer C. 1948, էջ 104, նկ. 95/5): Սուրն ունի 55 սմ երկարություն (ըստ գծանկարի), իսկ դաստակը կազմում է զենքի 1/4-ը: Շեղքը հատույթում ձվաձիթ է, օժտված կենտրոնական ողով:

Քսաներեքերորդ տարբերակ (աղ. 16, նկ. 15) - Այս տարբերակը ևս առայժմ ներկայացված է մեկ օրինակով: Դա Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան հատվածի (Մազանդարանի շրջան) Քալարդաշտ բնակավայրից հայտնաբերված ոսկե դաշույնիկն է: Այն ունի մահիկածև գլխիկ, ուղիղ-մատնեքավոր բռնակ, պայտածև խաչարդ և հավասարաչափ նեղացող շեղք (Husot J.-L. 1965, աղ. 153): Հրատարակության մեջ չափերը նշված չեն: Դատելով լուսանկարից, դաստակը կազմում է զենքի ողջ երկարության 1/3-ը: Շեղքն ըստ ամենայնի թույլ ձվաձիթ գծագրություն ունի և օժտված է կենտրոնական ողով:

Քսանչորսերորդ տարբերակ (աղ. 17, նկ. 2-7) - Քննարկվող զենքի այս տարբերակը կազմում են մահիկածև գլխիկով, ուղիղ-մատնեքավոր բռնակով, ուղղանկյունաձև խաչարդով և հավասարաչափ նեղացող շեղքով երկաթե դաշույններն ու սրերը: Այս տարբերակը ևս մեծաքանակ չէ:

Նման մի սուր հայտնաբերվել է Հայկական լեռնաշխարհում, Սպանդարյանի (Կուլիջան) ավերված դամբարանից (աղ. 57) և թվագրվում է մ.թ.ա. 11-9-րդ դարերով (Թորամանյան Թ. 1942, էջ 14-30: Хачатрян Т. 1975, էջ 23-24, նկ. 6: Аремян Г. 1974, էջ 193-198): Սրի երկարությունը 65 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի մոտ 1/5-ը: Շեղքը հատույթում շեղանկյուն է և օժտված է կենտրոնական ողով: Նույն տարբերակին պատկանող երկաթե երկու դաշույններ և երեք սրեր հանդիպում են Իրանական սարահարթի արևմտյան շրջաններից (Լուրիստա.): Դաշույնները հայտնաբերվել են Գուլ-Խանան-Մուրդա (դամբարան 80) (աղ. 58) և Վար-Կարուղ (պատահական) հնավայրերից և ըստ Լ. Վանդեն Բերգեի վերաբերում են մ.թ.ա. 9-8-րդ դարերին (Vanden Berghe L. 1967, էջ 56, նկ. a: Vanden Berghe L. 1980, էջ 47, նկ.

11): Սրերը Լուրիստանի Թաթուրան-Շինան (դամբարան 4) (ադ. 60) և Շումգի-Մումա (դամբարաններ 53 և 56) (ադ. 59) հնավայրերից են և, ըստ հնագիտական համալիրների, դարձյալ թվագրվում են մ.թ.ա. 9-8-րդ դարերով (Vanden Berghe L. 1972, էջ 12, նկ. 13: Vanden Berghe L. 1977, էջ 54: Vanden Berghe L. 1983, էջ 83, նկ. 39/13): Իրանական դաշույնների ու սրերի երկարությունը 34-58 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/3-1/4-ը: Շեղբերը հատույթում շեղանկյուն են, օժտված՝ կենտրոնական ողով:

Առաջավոր Ասիայի մյուս շրջաններում այս տարբերակը չի հանդիպում:

Քսանհինգերորդ տարրերակ (ադ. 17, նկ. 8-11) - Այս տարբերակին բնորոշ են երիզներից գուրկ, զանգվածեղ շեղանկյունաձև գլխիկը, ուղիղ-հարթ բռնակը, ուղղանկյունաձև խաչարդը և հավասարաչափ նեղացող շեղբը: Նախորդ տարբերակից այս օրինակներն առանձնանում են գլխիկի զանգվածեղ շեղանկյան տեսքով և դաստակի երկմետաղյա կառուցվածքով (գլխիկը, բռնակի և խաչարդի երիզները՝ բրոնզից են, բռնակի միջնապատն ու շեղբը՝ երկաթից): Այս տարբերակի չորս սրերը հայտնաբերվել են Կարմիր բլուրի (Թեյշեբահնի) պեղումներից (մեկը խիստ քայքայված վիճակում է, պահպանվել է բրոնզե գլխիկն ու բռնակի երկաթե միջնապատի մի մասը): Թվագրվում են մ.թ.ա. 8-7-րդ դարերով (Плютовский Б. 1970, նկ. 51, 52): Սրերի երկարությունը 65-73 սմ է, իսկ դաստակը կազմում է զենքի 1/5-ը:

Առաջավոր Ասիայի մյուս շրջաններից այս տարբերակին վերաբերող զինատեսակներ հայտնի չեն:

ՎԵՐՁԱԲԱՆ

Այսպիսով, ձեռքի տակ եղած հնագիտական նյութը հնարավորություն է ընձեռնել շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի մեծ խմբի մեջ առանձնացնել երեք ենթախմբեր՝ ընդհանուր 32 տարբերակներով և վեր հանել նրանց ձևավորման ու զարգացման որոշ օրինաչափությունները: Կատարված ուսումնասիրությունները հանգեցնում են մի խումբ հետևությունների:

Հետևություն 1. Մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծում Հին Արևելքում հանդես է գալիս շրջանակավոր կառուցվածք ունեցող դաստակով զենք, որն, ըստ ամենայնի, վաղբրոնզեդարյան պոչուկավոր դաշույնի պոչուկի աստիճանական լայնացման, պոչուկի ու շեղքի միացման մասի առանձնացման ու քննարկվող զենքի նոր ձևավորված հատվածների երիզավորման (ներդիրներն ընդելուզելու համար) հետևանքն է: Այդ են մատնանշում ինչպես մ.թ.ա. 3-րդ հազարամյակի պոչուկավոր դաշույնի հետագոտումն, այնպես էլ շրջանակավոր դաստակով դաշույնների նախնական օրինակների նրանց հետ համադրումը: Խոսքը վերաբերում է առաջին և մասամբ երկրորդ ենթախմբերում առանձնացված վաղազույն դաշույններին, որոնք փաստորեն շրջանակավոր դաստակով զենքի կայացման օրինակներ են հանդիսանում: Այս ենթախմբերի մեջ մտնող դաշույնների յոթ տարբերակներից երկուսում բացակայում են գլխիկն ու խաչարդը, յոթում՝ գլխիկը: Այլ խոսքով, այս ենթախմբերի դաշույնները ձեռք բերելով իրենց հիմնական հատկանիշը՝ երիզավորված դաստակը, դեռևս ամբողջությամբ չեն օժտվում շրջանակավոր զենքին բնորոշ կառուցվածքային առանձնահատկություններով: Նրանց վաղազույն օրինակները հայտնի են Սիրիա-պաղեստինյան աշխարհից և թվագրվում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծով: Ըստ որում, շրջանակավոր դաստակով զենքի հանդես գալը բուրավիճ էլ չի պայմանավորում պոչուկավոր դաշույնների անհետացում: Վերջիններս, մեր կարծիքով, հիմք հանդիսանալով նոր զինատեսակի առաջացման համար, ոչ միայն չեն կորցնում իրենց նախնական տեսքը, այլև մ.թ.ա. 2-րդ հազարամյակում շարունակում են կիրառվել շրջանակավոր և այլ տիպի կառուցվածք ունեցող դաստակով զինատեսակների հետ զուգահեռ ու հանդես բերում պոչուկավոր դաշույնների, սուսերների ու սրերի հետաքրքիր տարբերակներ:

Շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի ձևավորման գործընթացն, ըստ էության, ավարտվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբին, երբ զենքը ձեռք է բերում իր վերջնական տեսքը: Դա դաստակի երեք հատվածների ու շեղքի առկայությունն է կառուցվածքային մեկ ամբողջության մեջ: Այս դաշույններն ու սրերն առանձնացված են մեր դասակարգման երրորդ ենթախմբում և հանդես են բերում քսանհինգ տարբերակներ: Ընդհանուր առմամբ շրջանակավոր դաստակով զենքի երեք ենթախմբերում առանձնացված 32 տարբերակները պայմանավորված են գլխիկի վեց (հովհարածև, կլորավուն, մահիկածև, կորնթարդ, շեղանկյունածև, քամբածև), բռնակի երկու (ուղիղ-հարթ, ուղիղ-մատնեքավոր), խաչարդի ութ (ուղղանկյունածև, զանգվածեղ և քառակուսի, ներճկված, սեղանածև, եղանածև, շրիշակավոր (ձողածև), եղջյուրավոր, պայտածև) և շեղքի երեք (հավասարաչափ նեղացող, զեղարդածև, կեռ) դրսևորումներով: Գլխիկի վերոհիշյալ վեց ձևերից ավելի հաճախ հանդիպում են հովհարածևը (25 տարբերակից 13-ում՝ 52%), բռնակի երկու ձևերից՝ ուղիղ-հարթը (32

տարբերակից 25-ում՝ 78%), խաչարդի ութ ձևերից՝ ուղղանկյունաձևը (30 տարբերակից 10-ում՝ 33%), շեղբի երեք ձևերից՝ հավասարաչափ նեղացողը (32 տարբերակից 28-ում՝ 87,5%): Եթե նշված հաշվարկների հիման վրա դաստակի երեք հատվածների և շեղբի ամենից հաճախ հանդիպող ձևերով մոդելավորելու լինենք շրջանակավոր դաստակով զենքի հիմնական օրինակը, ապա այն կունենա հովհարածև գլխիկ, ուղիղ-հարթ բռնակ, ուղղանկյունաձև խաչարդ և հավասարաչափ նեղացող (տերևածև) շեղբ: Ըստ որում սա դաստակի երեք հատվածների ու շեղբի ամենից հաճախ հանդիպող ձևերի պայմանական միավորում կամ մոդելավորում չէ մեկ ամբողջության մեջ, այլ ռեալ գոյություն ունեցող զինատեսակ: Այն լիովին կրկնում է մեր դասակարգման երրորդ ենթախմբի երկրորդ տարբերակը: Ահա հենց մման կառուցվածքով դաշույններն են 20-րդ դարի 30-ական թվականներին ինտուիտիվ առանձնացվել շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի մեծ խմբից և պայմանականորեն անվանվել «առաջավորասիական տիպ» (Մесен А. 1935, էջ 162-163): Ամենավաղ օրինակները վկայված են Սիրիա-պաղեստինյան աշխարհում և թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներով: Այստեղ քննարկվող զինատեսակը տարածում է ստանում հիմնականում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին, իսկ գործածությունից դուրս գալիս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին (կիրառության մեջ մնալով մոտավորապես 700-800 տարի):

Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում մույն դաշույնները երևան են գալիս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդին (մ.թ.ա. 18-17-րդ դարեր), տարածում ստանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին, իսկ որոշ երկաթակուռ օրինակներ գոյատևում են մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի 2-րդ քառորդը (շուրջ 1000 տարի): Իրանական սարահարթի արևմտյան շրջաններում քննարկվող զինատեսակը հանդես է գալիս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին (մ.թ.ա. 13-12-րդ դարեր) և գործածության մեջ մնում մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին քառորդը (շուրջ 400-500 տարի): Հին Արևելքի մյուս շրջաններում (Հյուսիս-արևելյան Աֆրիկա, Փոքր Ասիա, Միջագետք, Արաբական թերակղզի, Կովկաս) այս դաշույններն ու սրերը լայն տարածում չեն ստանում և հայտնի են եզակի (հաճախ մաս պատահական) օրինակներով:

Հետևություն 2. Շրջանակավոր կառուցվածք ունեցող դաստակով դաշույնների ու սրերի մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում առանձնացնել այդ զինատեսակի արտադրության երեք հիմնական օջախ. ա) Սիրիա-պաղեստինյան աշխարհ, բ) Հայկական լեռնաշխարհ, գ) Իրանական սարահարթի արևմտյան շրջաններ: Այս երեք հիմնական օջախներից գատ, Միջերկրականի ավազանում նկատվում է ևս մեկ օջախի (Էգեյան աշխարհ) գոյությունը, որը ձևավորվելով շրջանակավոր դաստակով դաշույնների նախնական (սիրիա-պաղեստինյան) օրինակների ազդեցության տակ, իր մեջ չի ներառել քննարկվող զենքի հիմնական ձևերն ու զարգացել է ինքնուրույն օրինաչափություններով (տես աղ. 18 և աղ. 19):*

Նշված երեք հիմնական օջախների գործունեության մեջ նկատվում է մի ուշագրավ երևույթ: Սիրիա-պաղեստինյան օջախի կայացման ժամանակ (մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագիծ) Հայկական լեռնաշխարհի և

* Ստորակետից ձախ դրված թվանշանը ցույց է տալիս ենթախումբը, աջը՝ տարբերակը:

Իրանական սարահարթի օջախները դեռևս գոյություն չունեն: Նրա բուն ծաղկման շրջանում (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կես) սկսում է ձևավորվել հայաստանյանը: Վերջիններիս ակտիվ գործունեության ժամանակահատվածում (մ.թ.ա. 16-13-րդ դարեր) սիրիա-պաղեստինյանն աստիճանաբար անկում է ապրում և դադարում գոյություն ունենալուց, իսկ իրանական օջախը նոր միայն սկսում է ձևավորվել: Մ.թ.ա. 13-11-րդ դարերում Իրանական սարահարթի արևմտյան շրջաններում բուն զարգացում ապրող շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի արտադրության օջախի կողքին՝ արդեն չկա սիրիա-պաղեստինյանը, իսկ Հայկական լեռնաշխարհինը չունի իր նախկին հզորությունը: Փաստորեն ստացվում է շրջանակավոր դաստակով զենքի արտադրական օջախի հաջորդական վախճանում (տարածքային և ժամանակագրական առումներով) Սիրիա-պաղեստինյան աշխարհից Հայկական լեռնաշխարհ, այստեղից էլ Իրանական սարահարթ ուղղությամբ: Ըստ որում, շրջանակավոր դաստակով զենքի ձևավորման նախնական օջախում՝ Սիրիա-պաղեստինյան աշխարհում, չի նկատվում քննարկվող զինատեսակի տարբերակային բազմազանություն (և դա օրինաչափ է ձևավորվող նոր զենքի համար): Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհի և Իրանական սարահարթի գտածոներին, ապա տարբերակներն այստեղ բազմազան են:

Քննարկվող 32 տարբերակներից Սիրիա-պաղեստինյան աշխարհի հետ կապ ունեն ութը: Դրանցից 3-ը (ենթախումբ 1-ին, տարբերակներ 1-ին, 2-րդ: Ենթախումբ 3-րդ, տարբերակ 22-րդ) հանդիպում են բացառապես Սիրիա-պաղեստինյան աշխարհում, 4-ը (ենթախումբ 2-րդ, տարբերակ 1-ին, ենթախումբ 3-րդ, տարբերակներ 1-ին, 2-րդ, 7-րդ)՝ սկզբում հանդես են գալիս այստեղ, ապա տարածվում Հին Արևելքում, իսկ 1-ը (ենթախումբ 3-րդ, տարբերակ 6-րդ), ըստ ամենայնի, Հայկական լեռնաշխարհից կրած ազդեցության հետևանք է:

Թվարկված տարբերակների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ շրջանակավոր դաստակով զենքի գլխիկի՝ հովհարաձև, բոնակի՝ ուղիղ-հարթ, խաչարդի՝ սեղանաձև, ուղղանկյուն, եղանաձև և շեղքի՝ հավասարաչափ նեղացող (տերևաձև) ու կեռ դրսևորումները սիրիա-պաղեստինյան զինագործական արհեստանոցի գործունեության արդյունք են: Դաշույնների դաստակներն այստեղ երբեմն անցքեր կամ գամեր ունեն ներդիրների ամրացման համար, իսկ շեղքերը հատույթում հիմնականում թույլ ձվաձիր են՝ զուրկ կենտրոնական ողից և խորադիր ակոսներից:

Հայկական լեռնաշխարհում քննարկված 32 տարբերակներից հանդիպում են 20-ը: Դրանցից 3-ը (3-րդ ենթախումբ, տարբերակներ 1-ին, 2-րդ, 7-րդ) սիրիա-պաղեստինյան զինագործության ազդեցությունն են կրում, 7-ը (ենթախումբ 2-րդ, տարբերակներ 4-րդ, 5-րդ: Ենթախումբ 3-րդ, տարբերակներ 8-րդ, 9-րդ, 11-րդ, 19-րդ, 25-րդ)՝ զուտ տեղական երևույթ են, 8-ը (ենթախումբ 2-րդ, տարբերակ 2-րդ: Ենթախումբ 3-րդ, տարբերակներ 3-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 24-րդ)՝ սկզբում հանդես են գալիս Հայկական լեռնաշխարհում, ապա տարածվում Առաջավոր Ասիայում, իսկ 2-ը (ենթախումբ 2-րդ, տարբերակ 3-րդ: Ենթախումբ 3-րդ, տարբերակ 20-րդ) Իրանական սարահարթի արևմտյան շրջանների ազդեցության հետևանք են: Այս համադրումները թույլ են տալիս պնդել, որ գլխիկի՝ կորնթարդ, թամբաձև, շեղանկյունաձև, բոնակի՝ մատնեքավոր, խաչարդի՝ ներճկված, պայտաձև և շեղքի՝ գեղարդաձև դրսևորումները Հայկական լեռնաշխարհի զինագործ

վարպետների նորամուծության արդյունք են: Այստեղ դաշույնների դաստակները հիմնականում զուրկ են ներդիրների ամրացման համար արված անցքերից (հանգամանք, որով հայաստանյան զենքը տարբերվում է սիրիա-պաղեստինյանից), շեղբերը հատույթում ձվաձիք են, շեղանկյուն կամ վեցանիստ հիշեցնող գծագրություն ունեն և զերազանցապես օժտված են կենտրոնական ողով ու խորադիր ակոսներով:

Իրանական սարահարթում քննարկված 32 տարբերակներից հանդիպում են 17-ը: Դրանցից 3-ը (ենթախումբ 3-րդ, տարբերակներ 1-ին, 2-րդ, 7-րդ)՝ կրկնում են սիրիա-պաղեստինյան զինատեսակների ձևերը, 7-ը (ենթախումբ 2-րդ, տարբերակ 2-րդ: Ենթախումբ 3-րդ, տարբերակներ 3-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 13-րդ, 24-րդ)՝ Հայկական լեռնաշխարհի զինագործության ազդեցությունն են կրում, 4-ը (ենթախումբ 3-րդ, տարբերակներ 4-րդ, 15-րդ, 21-րդ, 23-րդ) զուտ իրանական երևույթ են, իսկ 3-ը՝ (ենթախումբ 2-րդ, տարբերակ 3-րդ: Ենթախումբ 3-րդ, տարբերակներ 14-րդ, 20-րդ) սկզբնապես հանդես են եկել Իրանական սարահարթի արևմտյան շրջաններում, ապա տարածվել Առաջավոր Ասիայում: Նշվածից կարելի է եզրակացնել, որ զլխիկի՝ շրջանաձև և մահիկաձև դրսևորումները Իրանական սարահարթի արևմտյան շրջանների զինագործ վարպետների նորամուծությունն են: Շեղբերը հատույթում ձվաձիք, շեղանկյունաձև կամ վեցանիստ հիշեցնող գծագրություն ունեն և երբեմն օժտված են կենտրոնական ողով ու խորադիր ակոսներով:

Էգեյան աշխարհում քննարկված 32 տարբերակներից հանդիպում են միայն 4-ը: Դրանցից 1-ը (ենթախումբ 2-րդ, տարբերակ 1-ին)՝ սիրիա-պաղեստինյան զինագործության ազդեցությունն է կրում, 2-ը (ենթախումբ 3-րդ, տարբերակներ 16-րդ, 17-րդ)՝ միայն էգեյան զինագործությանը բնորոշ նմուշներ են, իսկ 1-ը (ենթախումբ 3-րդ, տարբերակ 18-րդ) սկզբնապես հանդես է գալիս Էգեյան աշխարհում, ապա նրա հատուկենտ օրինակները հանդիպում են Առաջավոր Ասիայում: Էգեյան աշխարհին բնորոշ տարբերակների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ շրջանակավոր դաստակով զենքի կառուցվածքային մասերի ձևավորման մեջ այդ օջախի ունեցած միակ ներդրումը՝ եղջյուրավոր խաչարդի ստեղծումն է: Էգեյան օրինակները ևս դաստակներին անցքեր կամ գամեր ունեն ներդիրների ամրացման համար (հանգամանք, որով նրանք մոտենում են սիրիա-պաղեստինյան օրինակներին), իսկ շեղբերը հատույթում թույլ ձվաձիք են՝ հիմնականում օժտված կենտրոնական ողով (երևույթ, որ նրանց մոտեցնում է հայաստանյան զենքին):

Այսպիսով շրջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի բոլոր տարբերակների համադրված քննարկումը մեկ անգամ ևս թույլ է տալիս պնդել, որ քննարկվող զինատեսակի նախնական օրինակները հանդես են եկել Սիրիա-պաղեստինյան աշխարհում: Այնուհետև համարյա միաժամանակ, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին, այստեղից մուտք գործել Հյուսիս-արևելյան Աֆրիկա (Եգիպտոս), Էգեյան աշխարհ և Հայկական լեռնաշխարհ: Եգիպտոսում այս զինատեսակն ընդհանրապես լայն ընդունելություն չի գտել, իսկ Էգեյան աշխարհում զարգացել է ուրույն օրինակաչափություններով: Վերջինիս ազդեցությունը նկատելի է հատկապես Կենտրոնական Եվրոպայի մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների սահմանագծի և մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին հնագիտական հուշարձաններում: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին միայն Հայկական լեռնաշխարհն է պահպանել սիրիա-պաղեստինյան զենքի դասական օրինակների բոլոր մանրամասները, ապա մ.թ.ա. 2-րդ

հազարամյակի կեսերից զարգացնելով ու կատարելագործելով դրանք, իր հերթին նպաստել է նման զինատեսակների տարածմանը Իրանական սարահարթում: Օջախներից յուրաքանչյուրը պատմական որոշակի ժամանակահատվածում ունեցել է արտադրության իրեն բնորոշ զինատեսակներն ու ազդեցության ոլորտները (տես աղ. 18 և աղ. 19):

Հետևություն 3. Երջանակավոր դաստակով դաշույնների ու սրերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում քննարկել այս զենքը ևս մեկ տեսանկյունից: Դա վերջինիս ծիսական բնույթն է, որը վկայում են մի շարք ուշագրավ փաստեր: Դրանցից առաջինը կապված է Աշշուր քաղաքի Անու-Ադադ աստվածների տաճարում հայտնաբերված փոքրիկ դաշույնիկի հետ: Այն գտնվել է երկրեբան մանրակերտ սակրի հետ միասին և թվագրվում է մ.թ.ա. 9-րդ դարով: Երկուսի փոքր չափերն (դրանք հնարավոր չէ որպես զենք օգտագործել) ու նույն տաճարում միասին հայտնաբերվելն արդեն անուղղակի կերպով հուշում են նրանց ծիսական բնույթը: Այդ է մատնանշում մի հանգամանք ևս: Ինչպես նշեցինք վերևում, Աշշուրի դաշույնիկն իր կառուցվածքային ձևերով շատ մոտ է Էգեյան աշխարհի դաշույններին ու սրերին: Միջազետքում այն եզակի օրինակ է: Հայկական լեռնաշխարհում և Իրանական սարահարթում ևս նման դաշույններ վկայված չեն: Դաշույնիկի հետ հայտնաբերված երկրեբան սակրիկը ևս Էգեյան աշխարհի երևույթ է: Այստեղ այն կոչվում է «լաբրիս» և կապված է Չևսի պաշտամունքի հետ (հաճախ նման սակրերը կոչվում են «Չևս-լաբրիս») (Церен Э. 1976, էջ 194-196: Яновская Н. 1976, էջ 82: Брентъес Б. 1976, էջ 88-89): Չևսի շումերական համարժեքն Անուն է: Երկուսի անուններն էլ «երկինք» և «լույս» են նշանակում: Նրանք աստվածների հայրն են, երկնքի ստեղծողները, նստում են սրբազան լեռան վրա (Лосев А. 1991, էջ 463: Афанасьева В. 1991, էջ 75): Այստեղից կարելի է ենթադրել, որ Անու-Ադադ աստվածությունների տաճարում գտնված երկրեբան սակրիկը, որ Չևսի խորհրդանիշն է հանդիսանում, կարող է Էգեյան աշխարհից որոշակի նպատակներով բերված ծիսական զենք լինել, որ նվիրաբերվել է Չևսի շումերական համարժեք աստվածությանը՝ Անուին: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է և Աշշուրի երկրեբան սակրիկը կապված է Անուի պաշտամունքի հետ, ապա նույն սրբարանում հայտնաբերված շրջանակավոր դաստակով դաշույնիկը (որ դարձյալ էգեյան ծագում ունի) պետք է որ կապված լինի տաճարի մյուս աստվածության՝ Ադադի հետ (փոթորիկի ու տարերքի աստված): Երջանակավոր դաստակով զենքի կապն Ադադ աստծո հետ վկայում է մի փաստ ևս: Դա Հայկական լեռնաշխարհից (Ամիդ) հայտնաբերված շրջանակավոր դաստակով սրի և Իրանական սարահարթի արևմտյան շրջաններից (Լուրիստան) հայտնաբերված որոշ դաշույնների շեղբերին պահպանված «Ադադնիրարի» և «Ադադ-Ափրա-Իդդին» անվանումներն են: Ըստ որում, լուրիստանյան շրջանակավոր դաշույնների վրա շումերա-աքադական Ադադին երբեմն փոխարինում է նրա բաբելոնյան համարժեքը՝ Մարդուկը (շեղբերի վրա արձանագրված է «Մարդուկ-Նադին-ախսե», «Մարդուկ-Շափիկ-գերի»): Նուզիից (Յուրդան-թեփե) հայտնաբերված շրջանակավոր դաստակով դաշույնը Ներգալ աստծու պաշտամունքի հետ են կապում Ռ. Սթարն ու Հ. Գյոտերբոքը (Starr R. 1939, աղ. 125, նկ. KK-1: Güterbock H. 1965, էջ 197-198: Вильхельм Г. 1992, էջ 15-16):

Աշշուրի Անու և Ադադ աստվածությունների տաճարից հայտնաբերված էգեյան դաշույնիկը՝ շրջանակավոր դաստակով զենքի ծիսական բնույթը

մատնանշող միակ օրինակը չէ: Շրջանակավոր դաստակով մանրակերտ դաշույնիկներ (ոչ էգեյան տարբերակին պատկանող, այլ տեղական) հայտնաբերվել են Հասանլուի բնակատեղիի (Muscarella O. 1989, էջ 27, նկ. 5/), Քալարդաշտի (Hout J.-L. 1965, ադ. 153) և Հյուսիսային Կովկասի (Մուկուլան) (Доманский Я. 1984, նկ. 179) հնագիտական հուշարձաններից: Դաշույնիկների փոքր չափերը, որոշ օրինակների վրա՝ կախելու համար արված անցքերը, ինչպես նաև Քալարդաշտից հայտնաբերվածի ոսկուց պատրաստված լինելը մեկ անգամ ևս գալիս են վկայելու քննարկվող զինատեսակի նաև ծիսա-հմայական բնույթը:

Հաջորդ կարևոր փաստը, որ կարող է խոսել շրջանակավոր դաստակով դաշույնների ծիսական կիրառության մասին, Քարաշամբի և Հասանլուի արձաթե ու ոսկե գավաթների դրվագումներն են: Առաջինի վրա պատկերված է հնդեվրոպական առասպելաբանությանը բնորոշ սյուժե, որտեղ որսի, ծիսական խնջույքի, զոհաբերության, մարտի և մահապատժի տեսարանների կողքին առանձնակի ընդգծված են նաև զենքերը (դաշույններ, միզակներ, սակր): Դաշույնները կարծես թե ունեն շրջանակավոր կառուցվածք և կրկնում են Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 2-րդ հազարամյակում տարածում ունեցող նույնատիպ դաշույնների ձևերը (Оганесян В. 1988, էջ 146-160, նկ. 3): Հասանլուի գավաթը ներկայացնում է խուռիական դիցաբանական սյուժեներից մեկը (հավանաբար «Ասք Ռիլիկումմիի մասին» առասպելը): Այստեղ ևս որսի, մարտի, ծիսական խնջույքի ու զոհաբերության տեսարանների կողքին ընդգծված են զենքերը և նրանց թվում շեղբի վերին մասում պայտածև խաչարդով դաշույնը, որի դաստակը ևս շրջանակավոր կառուցվածք է հիշեցնում (Porada E. 1959: Dyson R. 1960: Hout J.-L. 1965: Porada E. and Dyson R. 1967): Կասկածից վեր է, որ վերոհիշյալ առասպելաբանական սյուժեների դրվագներում հանդիպող այս դաշույնները պատահական երևույթ չեն և, ըստ ամենայնի, առնչվում են ծիսական արարողակարգի որոշակի մանրամասների հետ:

